


Հ. Կ. ՓԱՆՈՍՅԱՆ

# ՄԻԿՐՈԲՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԵՐԵՐԻ ՍԻԼՈՍԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ




ԱՐՄՖԱՆ

1940

ՅԵՐԵՎԱՆ

04 AUG 2008

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ.



Տպագրվում ե ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի  
Հայկական Ֆիլիալի Նախագահության վորոշմամբ

### ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի  
Բիոլոգիական ինստիտուտը, լույս ընծայելով Հ. Կ. Փանոսյանի  
այս գիտական հանրամատչելի աշխատությունը, նպատակ ունի  
ոգնելու կոլոնտերությունների և խորհանուեառությունների այն  
աշխատողներին, վորոնք զբաղվում են սիլոսացման գործով:

Այդ աշխատողները, ուսումնասիրելով տվյալ աշխատու-  
թյունը, ավելի խորը կծանոթանան, թե ինչպես ե պատրաստվու-  
ական, ինչպես ե հասունանում այն, ինչ գեր են խաղում միկ-  
րոբանիզմները սիլոսի հասունացման գործում և, վոր զլիա-  
վորն ե, ինչպես անել վոր սիլոսը բարձրորակ լինի:

## ОТ ИНСТИТУТА

Биологический Институт Армянского Филиала Академии наук СССР, выпуская в свет настоящую научно-популярную работу А. К. Паносяна, имеет целью помочь работникам колхозов и совхозов, занимающимся силосованием кормов. Работники эти, изучив данную работу, еще глубже ознакомятся с тем, как приготовляется силос, как созревает он, какую роль играют микроорганизмы в силосовании, а главное, как получить высококачественный силос.

## ՄԻԿՐՈԲՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԵՐԵՐԻ ՍԻԼՈՍԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սոցիալիստական անասնապահության հետազարագավաճման և նրա քանակական ու վորակական ցուցանիշներն եւ ավելի բարձրացնելու համար խոշոր նշանակություն ունի կերի բազան։ Այդ տեսակետից անասնապահական շրջաններում հյութալի կերաբույսերի մշակությունը լավագույն հիմքերի վրա դնելը մի կողմից, և քաղված կերաբույսի հյութալիության պահպանումը մյուս կողմից՝ խոշոր նշանակություն ունի։

Անասունների արտադրողականությունը բարձրացնելու համար, հատկապես ձմռան սեղոնում, սրանց բավարար քանակի վորակավոր և միաժամանակ հյութալի կերաբույսերով կերակրելն եական նշանակություն ունի անասնապահության բնագավառում։

Կերաբույսերի հյութալիությունը պահպանելու համար անասնապահության մեջ լայն չափով կիրառվում է սիլոսացումը։ Այս գործն առանձնապես մեծ նշանակություն ունի անասնապահական այն շրջանների համար, վորտեղ կերակրման մասուրային շրջանը յերկար է։ Այդ շրջաններում կերերի սիլոսացումը մեծ առավելություններ ունի, վորովհետեւ սիլոսացված կերով անառաջնական կերակրելը բարձրացնում է նրանց կաթնատվությունը։

## ԿԵՐԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԻԼՈՍԱՑՄԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Կերաբույսերի սիլոսացումը հնարավորություն և տալիս պահպանել բույսերի թարմությունը, նրանց հյութալիությունը։

Կերերի սիլոսացումը նաև հնարավորություն և տալիս ոգտագործել այնպիսի բույսեր, վորոնք անասունների արոտային կերակրման ժամանակ չեն ոգտագործվում։

Սիլոսացված կերաբույսերի մեջ զգալի չափով պահպանվում են թարմ բույսերի հյութալիությունը։

Կաթնատնտեսության մեջ, որինակ, շատ վաղուց հայտնի յե, վոր կաթնատու կովերին հյութալի կերերով, ինչպես նաև սիլոսով կերակրելիս (համեմատած չոր խոտի հետ), նրանց կաթնատվությունը բարձրանում է: Այս հանգամանքն անասնապահներին մեծ հնարավորություն ե տալիս մսուրային կերակրման ժամանակ ևս բավարար քանակի և տարվա բոլոր յեղանակներին հավասարաչափ կաթ ստանալ, այլ կերպ ասած՝ ձմեռային կերակրման շրջանում նույնպես ստանալ այնքան կաթ, վորքան ստացվում ե արոտային կերակրման շրջանում:

Հայտնի յե, վոր ձմեռվա ընթացքում չոր խոտով, հատկապես դարմանով կերակրելիս, անասունները շատ հյուծվում են, նրանց կաթնատվությունը խիստ պակասում է:

Բազմաթիվ փորձեր ցույց են տվել, վոր անասուններին, ինեւ դրանք կաթնատու, թե վոչ կաթնատու, սիլոսով կերակրելիս, նրանց մոտ նման յերեսույթ չի նկատվում:

Սիլոսացված կերաբույսերի ազդեցությունը վհչ միայն այն ե, վոր նրանք իրենց վորակով և բնույթով շատ մոտ են բնական թարմ կերերին, այլև նրանց ոսլային եկվիվալենտ—միավորը, մի խումբ մասնագետների հաշվումներով, յերբեմն բարձր և ավելի եժան ե մինում չոր խոտի ոսլայի եկվիվալենտից:

Սոցիալիստական անասնապահության մեջ ռացիոնալ կերաբույսերի սիլոսացման գործին մեծ տեղ է հատկացվում, բայց անասուններին միայն սիլոսացված կերաբույսերով չեն կերակրում: Սիլոսով կերակրելիս՝ նրա հետ միշտ ել պետք ե տալ նաև կողիտ ու խտացրած կերեր, այդ դեպքում սիլոսի արժեքն ու նշանակությունն ավելի յե բարձրանում:

Բացի այդ, կերաբույսերի սիլոսացման ժամանակ բույսերի մոտ շատ չնչին կորուստ ե լինում, մինչդեռ խոտը չորացնելիս բույսի մարսելի մասը (ծաղիկներ և տերեններ) զգալիորեն պակասում է: Բայց ֆեղի յեթե չոր խոտի դեպքում կերի ոսլային միավորի 50%-ն ե կորչում, ապա սիլոսացման դեպքում այդ կորուստը հազիր համուռմ ե 10—15%-ի:

Մեր տնտեսություններում հաճախ հոկայական քանակությամբ բուսական մնացորդներ են կուտակվում, ինչպես որինակ՝ կարտոֆիլի կեղեններ, ճակնդեղի մնացորդներ, վորոնք մեծ քա-

նակությամբ կուտակվում են հատկապես շաքարի և ոսլայի գործարաններում: Այս նյութերը սովորաբար համարվում են «անպետք» նյութեր և խառնվում են աղբակույտերին: Սիլոսացման ժամանակ կարտոֆիլի ու ճակնդեղի մնացորդներից ամենավորակավոր և համեղ կերեր են ստացվում, առանձնապես այն գեղքում, յերբ այդ մնացորդները խառնում ենք շատ քիչ շաքարային նյութեր պարունակող բույսերի հետ:

Սիլոսացումն առանձնապես կարևոր և այն բույսերի համար, վորոնք բնական պայմաններում պարունակում են ալկալիդներ<sup>1</sup> — թույներ, հատկապես ձիակետը:

Նման բույսեր կենդանիները սովորաբար չեն ուտում, իսկ ուտելու գեղքում ել թունավորվում են, բայց, յերբ այդ բույսերը սիլոսացվում են, նրանց մեջ պարունակված ալկալիդները, թթվեցման ազդեցության տակ, իրենց թունավոր հատկությունը կորցնում են: Սիլոսացումից հետո նման բույսերը կենդանիները մեծ ախորժակով են ուտում:

Սիլոսացումն ունի նաև այլ առավելություններ, վորոնց մասին հանգամանորեն կխոսենք հետագայում:

## ԿԵՐԵՐԻ ՍԻԼՈՍԱՑՄԱՆ ՀԱՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կերերի սիլոսացումը բավական հին պատմություն ունի: Հին յեղիպտական բուրգերի պեղումները ցույց են տվել, վոր առանձին քարերի վրա մանրամասն, նկարված ե սիլոսացման ամբողջ ընթացքը. նկարներում պարզ արտահայտված ե, թե ինչպես են բույսերը կարատել ու առանձին կողովներով տեղափոխել հորի մեջ: Ցույց ե արված նաև հորի կառուցվածքը, նույնիսկ ցույց են արված սիլոսացման յենթակա առանձին բույսերի մոտավոր նկարները:

Հոռոմեյական կայսրության կոնսուլ վարթոնի վկայությամբ՝ սիլոսացումը հայտնի յե յեղել կարթագենցիներին (Հյուսիսային Աֆրիկայի նախկին բնակիչներին), իսպանացիներին, գալերին, ինչպես նաև հոռմայեցիներին: Վորոշ գիտնա-

<sup>1</sup> Ալկալիդ—արաբական բառ ե, վոր նշանակում է հիմք—սրանք բարդ հիմքեր են, վորոնք թույներ են հանդիսանում:

կանների տեղեկություններով՝ դեռ մինչև որս ել կարթագենիա-  
յում գոյություն ունեն սիլոսի հսկայական աշտարակների  
հին բեկորներ: Սիլոս բառն իսպանական ծագում ունի, վոր նշա-  
նակում ե կերարույսերը պահելու փոս կամ հոր:

Ճիշտ ե, կերերի սիլոսացման պրակտիկան շատ հին ե, բայց  
մինչև որս ել դեռ վոչ վոք հաստատ չի կարող ասել թե այդ վնա-  
յերկում և յերբանից ե սկիզբ առել:

Չնայած այդքան հնուց ե. սկիզբ առել սիլոսացման գործը,  
բայց այն ավելի լայն ընդունելություն ե գտել XVIII և XIX դա-  
րերում, հատկապես XIX դարի կեսերից սկսած: Առաջին անգամ  
սիլոսացումն ավելի լայն չափեր ե ընդունել Շվեյցարիայում,  
Զոնսպոնի աշխատությունից հետո: Անգլիայում նույնպես սիլո-  
սացումն սկսում ե հոկայական չափերի հասնել: Բավկական ե ասել  
վոր դեռ 1885 թվականին Անգլիայում հաշվվում ե յին 1183 սի-  
լոսային կառուցվածքներ: Յեթե մինչև XIX դարի 70-ական թվա-  
կանները ամերիկացիներին հայտնի չեր սիլոսացումը, ապա այդ  
թվականներից հետո նա այնպիսի արագ թափով ե սկսում զար-  
դանալ, վոր մինչև համաշխարհային պատերազմը Ամերիկան, բո-  
լոր յերկրների նկատմամբ, առաջնություն ե գրավում կերերի  
սիլոսացման գործում: Ամերիկացիք վոչ միայն սիլոսացման հո-  
րերի թիվն են ավելացնում, այլև սիլոսացմանը նոր ուղղություն-  
են տալիս: Սիլոսացման նախկին ձեռքություն կամ ավելացնելու համար ավելացնելու կառուցել գլանաձև աշտարակներ:

Յելրոպայում և Ամերիկայում սիլոսացման գործի լայն ծա-  
վալման ասպարեզում պակաս զեր չի խաղացել Փրանսիացի գիտ-  
ական Գոֆֆարը: Վերջինս 1877 թ. առաջին անգամ գրավո՞-  
կերպով մշակեց սիլոսացման հարցը, ցույց տալով, թե ինչ ուղ-  
ղությամբ ե ընթանալու կերարույսերը նման ձեռվ պահպանելու  
գործը: Նա ցույց տվեց նաև, թե սիլոսացվող կերարույսերի հետ  
հորում ինչպիսի փոփոխություն ե կատարվում և ինչի հետևանք են-  
այդ փոփոխությունները: Ահա զրա համար ել սիլոսացման աս-  
պարեզում աշխատող մի շարք գիտնականներ Գոֆֆարին համա-  
րում են սիլոսացման գործի նախահայրը: Ճիշտ ե, Գոֆֆարը սի-  
լոսացման գործի նկարագրության ժամանակ սխալ առաջարկու-  
թյուններ ե արել, ինչպիս որինակ, հորում վորեե խմբում թույլ

չավուր մասին, բայց դա Գոֆֆարի կատարած աշխատանքները  
յերբեք չի նսեմացնում:

Ցարական Ռուսաստանում սիլոսացման գործի վրա շատ քիչ  
ուշադրություն եր գարձում: Այստեղ սիլոսացումը վորոշ գիտա-  
հետազոտական հիմնարկների և մի քանի կալվածատերերի տրն-  
տեսություններից այն կողմը չեր անցնում: Այլ կերպ ասած  
կերերի սիլոսացումն այն չափերին չեր հասել ինչ վոր Յելրո-  
պայում:

Սիլոսացման գործը Ռուսաստանում ավելի լայն չափերի յե-  
նասնում, յերբ 1917 թ. Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղա-  
փոխության շնորհիվ տապալվում ե ցարական-կալվածատերական  
իշխանությունը և հաստատվում են սոցիալիստական կարգեր:  
1917 թվականից սկսած մեր անասնապահության հարաձաւն զար-  
գացման հետ միասին ծալվալվում ե նաև սիլոսացման գործը:  
Բավկան ե ասել, վոր միայն 1931 թվականին ամբողջ Խորհր-  
դային Միության մեջ սիլոսացման ե յենթարկվել 10 միլիոն-  
առն կերախոտ, իսկ 1938 թվականին այդ թիվն արդեն տաս-  
նապատկվել ե:

Հայաստանում մինչև խորհրդային իշխանության հաստա-  
տումը սիլոսացման մասին վոչ մի գաղափար չունեյին, և խոր-  
հրդային իշխանության հաստատումից հետո յե, վոր սիլոսացման  
գործն սկսում ե կազմակերպվել: Այժմ մեր անասնապահական  
շքնաների համարյա բոլոր խորհնակեսությունները և կոլտնտե-  
սություններն ունեն սիլոսացման հորեր, վորոշ տեղերում նաև  
աշտարակներ:

Բայց պետք ե ասել, վոր չնայած սիլոսացումն այդպիսի  
լայն ընդունելություն ե գտել անասնապահության մեջ, այնու-  
ամենայնիվ սիլոսացման գործը մեզ մոտ դեռ պատշաճ բարձրու-  
թյան վրա չի գրված: Քիչ չեն այնպիսի գեղաքեր, յերբ սիլո-  
սացված կերախոտերը հորերում նեխում, վչանում են, շնորհիվ  
նրան, վոր մեր անասնապահության մեջ աշխատողները սիլոսաց-  
ման գործին լավ ծանոթ չեն, հորերն այնպես չեն կառուցում,  
ինչպես անհրաժեշտ ե, բույսերի ընտրությունը լավ չի կատար-  
վում և այլն:

Մեր աշխատողներից շատերը գեուս չկիտեն, թե ինչ փո-  
փոխություններ են տեղի ունենում սիլոսացման պրոցեսում և

Բնչպիսի հետևանքներ են ունենում այդ փոփոխությունները: Անհրաժեշտ կանոնները չպահպանելու հետևանքով պատրաստված սիլուզ նեխում ե և կերակրելու համար դառնում անպետք:

Դեռ Գոֆֆարը և նրանից հետո մի շաբք հետազոտողներ պարզել ելին, վոր սիլոսացման ժամանակ հիմնական պրոցեսը՝ դա, այսպիս կոչված, խմորումներն են, վորոնք առաջ են գալիս սովորական աչքի համար անտեսանելի միկրոբների կենսագործունելության հետևանքով: Նշանակում ե, պետք է լավ ծանոթ լինենք այդ որգանիզմների կենսագործունելության պրոցեսներին, վորպեսզի կարողանանք մեր ցանկացած ուղղությունը տալ նրանց:


### Ի՞նչ են Միկրոբները

Միկրոբներ կամ միկրոօրգանիզմներ են կոչվում բուսական և կենդանական աշխարհին պատկանող, հասարակ աչքի համար անտեսանելի այն բոլոր եյակները, վորոնց ուսումնասիրում են միայն միկրոսկոպի միջոցով: Այսպիսի եյակներից են, որինակ, բակտերիաները, շաքարանկերը, բորբոսանկերը, նառագայրանկերը, ջրիմուռները և նախակենդանիները (ամյութ — ինֆուզորիա և այլն):

Այս միկրոբները բնության մեջ շատ են տարածված, նրանք գտնվում են ողի, ջրի, հողի մեջ, սննդամթերքների, բույսերի և կենդանիների վրա: Բնության մեջ միկրոբներից առանձնապես շատ են տարածված բակտերիաները. նրանք անչափ շատ են թե հողի, ջրի, ողի մեջ և թե բույսերի վրա: Բակտերիաները միկրոբների շարքում ամենափոքր միարջիջ անքորդովիլ որգանիզմներն են: Սրանք լինում են գնդի, ձողիկի և պարույրի (սպիրալի) ձևով (տես նկ. 1):

Միկրոսացման ժամանակ հիմնական գերը պատկանում է բակտերիաներին. շաքարանկերը և բորբոսանկերը գործում են մասամբ: Վերջիններս զարգանալով սիլոսի մեջ, կերի վորակը խիստ գցում են: Շաքարանկերն այնպիսի միկրոբներ են, վորոնք իրենց զարգացման ընթացքում անպայման շաքարային սննդանյութեր են պահանջում: Սրանք շաքարները վեր են ածում սպիրալի և ածխաթթու գաղի: Նորմալ սիլոսացման ժամանակ շաքարանկերը նույն-

պես միարջիջ որգանիզմներ են (տես նկ. 2) և խոշոր նշանակություն ունեն հատկապես գինեգործության, գարեջրի արդյունաբերության, հացաթխման մեջ, կերերի դրոժացման ժամանակ և այլն:



Նկ. 1. Բակտերիաներ


1—4 գնդաձև բակտերիաներ, 5—7 ձողաձև բակտերիաներ և 8—9 պարույրաձև բակտերիաներ:

Բորբոսանկերը, համեմատած բակտերիաների և շաքարանկերի հետ, բավական զարգացած, կատարելագործված որգանիզմը մենք հաճախ հասարակ աչքով տեսնում ենք (տես նկ. 3): Սրանք զարգանալով սննդամթերքների մակերեսի վրա առաջացնում են թափային ծածկոց: Նայած թի ինչպիսի բորբոսանկեր են զարգանում, ըստ այսմ ել այդ ծածկոցներն ունենում են սե, սպիտակ, գորշ, դեղին և այլ գույն:

Վերը հիշված միկրոբները բույսի կենդանության ժամանակ գտնվելով նրա տերևների, ցողունների վրա, կարող են յերկար ժամանակ ապրել այդտեղ: Այդ միկրոբներից շատերը բույսի վրա յերկար մնալով՝ վոչ մի ազդեցություն չեն թողնում, իսկ վորոշ տեսակներ, ընդհանարակը, բույսի կենդանության ժամանակ թափանցում են նրա հյուսվածքների մեջ և սկսում են այնտեղ զարգանալ վորի հետեւանքով՝ բույսերը հիվանդանում են. զրապատճառով կամ չորանում և բույսի այն մասը, վորտեղ միկրոբներն են զարգացել և կամ ամբողջ բույսը շաքարից գուրս և զաւթու:


Միկրոբներից շատերը յերկար ժամանակ բույսի վրա մնալով, սնվելով բույսի արտադրանքներից, բույսին վնաս չեն

պատճառում: Բայց յերբ բույսը քաղվում և պահվում է խոնավ պայմաններում, այդ միկրոբներն ավելի արագ են զարգանում և խիստ փոփոխության յենթարկում բույսը: Նայած թե բույսը



Նկ. 2. Շաքարասնկեր:

քաղելուց հետո ինչպես և պահվում, ըստ այնմ ել նրա փոփոխության ընթացքը տարբեր և լինում: Քիչ հետո մենք կծանոթանանք այդ փոփոխություններին:



Նկ. 3. Բորբոսասնկեր  
1. մուգորներ, 2. ասպերգիլուսներ և 3—4 պենիցիլիումներ:

### ՍԻԼՈՍԱՑՎՈՂ ԿԵՐԵՐԻ ՄԵԶ ԱՌԱՋԱՑՈՂ ԽՄՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կերաբույսերը սիլոսացման յենթարկելով՝ մենք ստանում ենք թթված խոտեր, վորոշ հեղուկի մեջ. այդ թթվության շնորհիվ ե, վոր բույսերը յերկար ժամանակ կարողանում են իրենց թարմությունն ու հյութալիությունը պահպաներ բազմաթիվ

փորձեր ցույց են տվել, վոր սիլոսացման ժամանակ այդ թթվությունն առաջ ե գալիս սիլոսացվող բույսերի մեջ զարգացող վորոշ տեսակի բաւարարիաների կիսական պրոցեսների ժամանակի։ Այդ բակտերիաները բնության մեջ շատ են տարածված և մտնում են բույսի նպիֆիտ<sup>1</sup> միկրոբների կազմի մեջ։ Բույսերը քաղելուց հետո, հորի մեջ լցնելու ժամանակ, հսկայական քանակությամբ ել բակտերիաներ են հօրվում։

Բակտերիաները սիլոսի հորերում ակսում են քայքայել բույսի որդանիզմը։ Մնվելով առաջին հերթին բույսերի բջջի շաքարային նյութերով, բակտերիաներն առաջացնում են խմորումներ, ահա այս պրոցեսի ժամանակ ե, վոր բույսերի շաքարային նյութերը վեր են ածվում թթվուների։ Յերբ բակտերիան թթվություն և կուտակվում սիլոսի մեջ բույսերի վրա յեղած այլ տեսակի բակտերիաները չեն կարողանում զարգանալ։ Նման թթվային պայմաններում հատկապես չեն զարգանում նեխման բակտերիաները։ Վերջին խմբին պատկանող բակտերիաները թթվից խիստ տուժում են, նրանք թթվային սննդանյութերի մեջ վոչ մի կիսական նշույլ ցույց չեն տալիս։

Թե՛ այդ նեխման բակտերիաները և թե՛ բորբոսամնկերը խոնավացած և բաց վիճակում պահված խոտերի կամ այլ սննդանյութերի վրա գտնվելու դեպքում շատ արագ զարգանում են և դրա հետևանքով ել նյութերը նեխում, փառում են։ Անկասկած, այդ որդանիզմները սիլոսացվող կերաբույսերի հետ ընկնում են հորի մեջ, բայց շնորհիվ հորի յուրահատուկ կառուցվածքի (վորի շնորհիվ ող չի թափանցում ներս) և առաջացած թթվության, նրանք հնարավորություն չեն ունենալու զարգանալու, դրա շնորհիվ ել բույսերը չեն նեխում և փառում։ Բայց հենց վոր կերի մեջ ող և թափանցում, բորբոսամնկերն անմիջապես սկսում են գործել և թթվությունը պակասեցնել չենց վոր սիլոսի մեջ թթվությունը պակասում ե, նեխման բակտերիաներն անմիջապես սկսում են գործել և, դրա հետևանքով ել սիլոսացվող նյութն սկսում է արագ քայքայվել կամ նեխվել։

Տարրեր տեսակի եպիֆիտ միկրոբներ թթվության նկատ-

<sup>1</sup> Եպիֆիտ՝ միկրոբներ են կոչվում այն բույսը միկրոբները, զորոնք բույսի կենդանության ժամանակ գտնվում են բույսի մակերեսի վրա և բույսի հետ կենակցում են։

մամբ տարրեր վերաբերմունք են ցուցաբերում։ Կան բակտերիաներ, վորոնք թթվից չեն վախենում. թթվի պայմաններում նրանք զարգանում են, և, ընդհակառակը, ուժեղ հիմքային միջավայրում չեն կարող զարգանալ։ Կան միկրոբներ եւ, վորոնք զարգանում են հիմքային պայմաններում և չեն կարող զարգանալ թթվային միջավայրում։

Միջավայրի թթվության կամ հիմքայնության աստիճանի նկատմամբ այս կամ այն բակտերիայի ունեցած վերաբերմունքը չափվում է pH սիմվոլով, վորը ցույց է տալիս միջավայրում յեղած հիմքային (oH) և թթվային (H) յոների գերակշռությունը։ pH սիմվոլն ունի 1—14 թվերը. pH=7-ի դեպքում հիմքային և թթվային յոներն այնքան են, վոր միմյանց չեղոքացնում են։ Իսկ յերբ pH=7-ի միջավայրում թթվային յոները գերակշռություն են հիմքային յոներին, այդ դեպքում միջավայրը խիստ թթվային է, pH=7—7-ը թթվային ե, ընդհակառակը, pH=7—14-ը հիմքային ե։ pH=14-ի դեպքում հիմքային յոները գերակշռություն են թթվային յոներին և միջավայրն ել խիստ հիմքային ե։

Ստորև հիշված բակտերիաներն իրենց զարգացման ժամանակ պահանջում են pH-ի հետեւյալ կոնցենտրացիան։

ա) Նեխման բակտերիաներից

Բակտերիում վուլգարեն զարգանում է pH=4,9—9,4

Բացիլուս սուբտիլիսը » » pH=4,5—8,5

բ) Կաքնաբբվային բակտերիաներից

Լազոսոբացիլուս պենտուացետիկուսը

զարգանում է pH=3,0—8,6

Ստրեպտոկոկուս լաքտիսը » » pH=3,0—7,9

Բակտերիում կազեինը » » pH=3,0—7,0

Բերված տվյալներից յերեւմ ե, վոր բավարար թթվությունը կաթնաթթվային բակտերիաներին չի ֆւասում, նրանք կարողանում են զարգանալ pH-ի բավականին ցածր թվերի պայմաններում, մինչդեռ նեխման բակտերիաներն այդ թվերի դեպքում զարգանալ չեն կարող։

Լավ սիլոսի դեպքում, կաթնաթթվային բակտերիաների գործունեյության շնորհիվ, բավական շատ թթվություն է կու-



տակվում, վորը կազմում ե սիլոսացվող կերերի չոր մասսայի 6—8%-ը կամ սիլոսի 1,5—2%-ը: Թթվության այդ քանակի գեպօւմ սիլոսը շատ լավ վորակի յե լինում:

### ԻՆՉԻՑ Ե ԿԱԽՎԱԾ ՍԻԼՈՍԻ ՎՈՐԱԿԻ

Ամեն մի պատահական բույս սիլոսացնել չի կարելի. սիլոսի վորակը կախված ե սիլոսացվող բույսից: Վերևում տեսանք, վոր կաթնաթթվային խմորման ժամանակ միկրոբներն ոգտագործում են բույսի շաքարային նյութերը, շաքարն ե, վոր միկրոբների կենսական պրոցեսների ժամանակ վեր ե ածվում կաթնաթթվի. յեթե բույսի մեջ շաքարային նյութը բացակայում ե, կաթնաթթու առաջանալ չի կարող, և սիլոսացվող մասսան կսկսի նեխվել: Նշանակում ե, սիլոսացվող բույսն անպայման շաքարային նյութ պետք ե պարունակի: Կան բույսեր, վորոնք շաքարային նյութերով հարուստ են, ինչպես՝ որինակ՝ յեղիպտացորենի ցողունները, սորգոն, ճակնդեղը, յեղեգնի ցողունը և այլն, իսկ կան բույսեր ել, վորոնք շատ աղքատ են շաքարային նյութերով, ինչպես՝ որինակ՝ առվույտը, յերեքնուկը, կորնգանը, վիկը և այլն: Վերջիններս առանձին սիլոսացման յենթարկել յերեք չի կարելի: Շատ քիչ շաքար պարունակող բույսերի սիլոսացման ժամանակ նրանց հետ պետք ե խառնել շաքարով հարուստ բույսեր կամ նյութեր, այն հաշվով, վոր սիլոսացվող մասսայի մեջ լինի վոչ պակաս, քան 1% շաքար: Այդ նպատակի համար հաճախ ոգտագործում են շաքարի արդյունաբերության մնացորդները, որինակ՝ մելասը, վորը շատ եժան նյութ ե, կարտոֆիլային մղեղը և այլն: Շաքարով բավական հարուստ այս նյութերը խառներով շաքարանյութերով աղքատ բույսերի հետ, ապահովում ե սիլոսացման ժամանակ բավարար քանակի կաթնաթթվի առաջացումը և դրանով իսկ՝ լավ վորակի սիլոսի ստացումը:

### ՈԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԻԼՈՍԱՑՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ

Սիլոսացման ժամանակ թթուն առաջ ե դալիս թթվածնի բացակայության դեպքում: Յեթե ողն ազատ մուտք ե դործում սիլոսացվող կերի մեջ, այդ դեպքում թթու առաջ չի դալիս, այլ դարգանում են բորբոսասունկերը և նեխման բակտերիաները,

վերջիններիս ազդեցության տակ կերանյութը նեխվում ե: Թթու առաջացնող բակտերիաներն ողի (թթվածնի) կարիք չեն զգում, նրանք շնչառության ժամանակ ճեղքում են շաքարը և դրանից ստացված ջերմությունն ուժագործում իրենց կենսական պրոցեսների համար: Շաքարների այդ ճեղքման պրոցեսից ե, վոր առաջ ե դալիս բավարար քանակությամբ կաթնաթթու: Այստեղից ել պարզ ե, ուրեմն, վոր սիլոսացվող կերանյութի միջից ողը հեռացնելը և նրա մուտքն արգելելը, ինքնին նպաստում ե թթուների առաջացմանը և, հետևապես, սիլոսի լավ վորակին: Ամեն կերպ պիտի արգելել ողի մուտքը սիլոսի մեջ:

### ԿԱԹՆԱԹԹՎԱՅՑԻՆ ԽՄՈՐՈՒՄ

Սիլոսացման ժամանակ կուտակված թթուներից ամենակարևորն ու ցանկալին կաթնաթթուն ե:

Կաթնաթթուն, ի տարբերություն մնացած թթուների, կերի մեջ կուտակվելով՝ նրան տալիս ե հաճելի համ ու հոտ և, միաժամանակ, ինչպես ասացինք, արգելում ե նեխման բակտերիաների գործունեյությունը: Նշանակում ե, ամեն կերպ պիտի աշխատել վոր սիլոսացվող կերերի մեջ բավարար քանակությամբ կաթնաթթու կուտակվի: Փորձերը ցույց են տվել, վոր կաթնաթթվային բակտերիաների շնորհիվ առաջացած խմորման ժամանակ միայն կաթնաթթու յե ստացվում, մինչդեռ այլ աեսակի խմորումների ժամանակ շաքարից զանազան այլ նյութեր են ստացվում: Որինակ՝ յուղաթթվային խմորման ժամանակ, բացի յուղաթթվից, առաջանում են նաև սղիրտ ու ածխաթթու և ջրածին գաղեր:

Յուղաթթվի խմորումը.—Սիլոսացվող կերերի մեջ միշտ ել գտնվում են յուղաթթվային խմորում առաջացնող բակտերիաները. սրանք, մի շարք այլ բակտերիաների հետ միասին, սիլոսի մեջ անցնում են բուսական մասսայի հետ:

Յուղաթթվային բակտերիաները սիլոսացվող կերերի մեջ զարգանալով՝ բույսի պարունակած զանազան տեսակի շաքարները, նույնիսկ ոսլան, թաղանթանյութը և պեկտինյան նյութերը<sup>1</sup> խմորում են, առաջացնում են յուղաթթու և այլ նյութեր:

<sup>1</sup> Պեկտինյան նյութերը են կոչվում բուսական հյուսվածքները կամ բջիջներն իրար շաղկապող նյութերը:

Յուղաթթուն կերին տալիս ե անախորժ և անդուրալի համ ու հոտ, վորով կերի արժեքը, նրա վորակը խիստ ընկնում ե, անասունները յուղաթթվոտ կերը չեն ուտում, խորշում են նրանից: Բացի այդ՝ յուղաթթվոտ կերով անասուններին կերակրելիս յուղաթթվային բակտերիաներն անխուսափելորեն կանցնեն կաթի մեջ, իսկ դա խիստ վնասակար ազդեցություն կթողնի կաթից վորոշ տեսակի պանիրներ պատրաստելու ժամանակ:

Յուղաթթվային բակտերիաներն իրենց զարգացման համար պահանջում են այն բոլոր պայմանները, վորոնք անհրաժեշտ են կաթնաթթվային բակտերիաների համար, այդ պատճառով ել յուղաթթվային բակտերիաները սիլոսի մեջ յերբեմն գերակշող միկրոբներ են հանդիսանում. սակայն դրանք միջավայրում կուտակված նույնիսկ քիչ թթվության նկատմամբ դիմացկուն չեն, հատկապես չնչին կաթնաթթվի առկայության պայմաններում չեն կարող գործել: Յեթե միջավայրում կաթնաթթվային խմութումը նորմալ ե ընթանում, յուղաթթվային բակտերիաները կամ բոլորովին չեն գործում կամ շատ թույլ աճեցողություն են ցույց տալիս, դրա համար ել նրանց առաջացրած յուղաթթուն չափազանց չնչին տոկոս ե կազմում:

Մի շաբք դիտողություններից պարզվում ե, վոր յեթե նույնիսկ միջավայրում թՀ-ը հավասարվում ե 4,7-4,8-ի, ապա կաթնաթթվային բակտերիաներն սպանիչ ներգործություն են ունենում յուղաթթվային բակտերիաների վրա:

Յուղաթթվային բակտերիաներն առաջացնում են դիմացկուն որդանիզմներ, սպորներ, վորոնք յերկար ժամանակ դիմանում են արտաքին աննպաստ ներգործությանը: Որինակ՝  $100^{\circ}$  ջերմության ժամանակ նրանց սպորները ժամերով կարող են դիմանալ, իսկ կաթնաթթվային պայմաններում այդ սպորները չեն զարգանում, բայց յերկար ժամանակ իրենց ծրունակությունը չեն կորցնում:

Յուղաթթվային բակտերիաների սպոր առաջացնելու հատկությունը շատ խոշոր նշանակություն ունի «տաք սիլոսացման» յեղանակով սիլոս պատրաստելու ժամանակ:

«Տաք սիլոսացման» ժամանակ, յերբ բուսական կանաչ մասսայի մեջ ջերմությունը  $55^{\circ}$ -ից բարձրանում ե, բոլոր կաթնաթթվային բակտերիաները մեռնում են, վորովհետեւ նրանք ջեր-

մագիմացկուն սպորներ չեն առաջացնում, իսկ յուղաթթվային բակտերիաների սպորները հեշտությամբ են դիմանում այդ բարձր ջերմաստիճանին: Յերբ սիլոսի մեջ ջերմաստիճանն իջնում ե, յուղաթթվային բակտերիաների սպորներն սկսում են ծելել և, միջավայրում չունենալով վորու մըշակից, սկսում են արագ զարգանալ, առաջացնում են մեծ քանակությամբ յուղաթթու և այլ կողմնակի նյութեր: Իսկ յերբ, ընդհակառակը, «տաք սիլոսացում» չի կատարվում, այլ սիլոսացումը կատարվում է ցածր ջերմաստիճանում՝  $35-45^{\circ}$ -ում, ապա առաջնությունը պատկանում է կաթնաթթվային բակտերիաներին, մինչեւ յուղաթթվային բակտերիաների սպորների ծելը միջավայրում արդեն բավական կաթնաթթու յեւ առաջանում և այդ կաթնաթթվի ազդեցության տակ յուղաթթվային բակտերիաներն այլևս չեն կարողանում զարգանալ:

Յուղաթթվային բակտերիաները սիլոսացման յենթակա կերի վրա ընդհանրապես քիչ են լինում, բայց յերբ բուսական մասսան կեղտառված ե նողով, յուղաթթվային բակտերիաների քանակն ավելանում ե: Այս գեղաքում սիլոսացման յենթակա կերի մեջ յուղաթթվի առաջանալն անխուսափելի յեւ:

Քացախարքվի և սպիրտի առաջանալը սիլոսացման ժամանակ. — Սիլոսացվող կերի մեջ միշտ ել կարելի յեւ գտնել վորոշ քանակությամբ քացախաթթու և սպիրտ: Վերջինս սկզբում առաջ ե գալիս բուսական բջիջների ներմուկելույար շնչառության ժամանակ, իսկ հետո՝ շաքարասնկերի և այլ միկրոբների դործունեյության շնորհիվ:

Բայտ Բուշմանի և Գրեֆի դիտողությունների՝ շաքարասնկերը սիլոսացվող կերի վորակը չեն իջնեցնում, այլ ընդհակառակը, վորոշ հաճելի արոմատ են տալիս նրան:

Սիլոսացվող կերի մեջ քացախաթթվի առաջանալը հետևանք ե մի շաբք քացախաթթվային բակտերիաների գործունեյության: Քացախաթթվային բակտերիաները միշտ ել սիլոսացվող կերի մեջ կարող են լինել: Սրանք աերոր բակտերիաներ են, այսինքն՝ իրենց զարգացման ընթացքում պահանջում են ոգ: Այս տեսակետից ել նրանց գործունեյությունը պայմանավորված է թթվածնով: Թթվածինը սիլոսացման սկզբնական զրջանում ամբողջապես ծախսվում ե քացախաթթվային բակտերիաների կողմից, հետեւ

վարար քացախաթթվային բակտերիաները սիլոսի մեջ կարող են զարգանալ սիլոսացման սկզբնական շրջանում միայն, այն ել կերի վերին շերտերում: Վերջին ժամանակները կատարված վորոշ փորձեր ապացուցում են, վոր քացախաթթվային բակտերիաները կարող են զարգանալ նաև անող պայմաններում, բայց այդ դեպքում նրանք քացախաթթու չեն առաջացնում, այլ շաքարը վեր են ածում սպիրտի և ածխաթթու գաղի:

Այսպիսով՝ կարող ենք ասել, վոր քացախաթթու կարող ե առաջ գալ քացախաթթվային բակտերիաների գործունեյության շնորհիվ, միայն սիլոսի վերին շերտում, այն ել թթվածնի առառության պայմաններում:

Սիլոսացման ժամանակ կերի մեջ քացախաթթու առաջ ե գալիս նաև այլ պրոցեսների շնորհիվ: Որինակ՝ կաթնաթթվային բակտերիաները, սիլոսի մեջ յեղած բարդ շաքարները (պենտոզաներ) խմորելու ժամանակ, առաջացնում են քացախաթթու: Այդ կաթնաթթվային բակտերիաներից մի քանիսը կարող են նաև քացախաթթու առաջացնել սովորական շաքարները խմորելու ընթացքում:

Սիլոսացվող կերի մեջ քացախաթթու յե կուտակվում նաև այսպես կոչված աղիքային-գազ առաջացնող խմբին պատկանող բակտերիաների գործունեյության շնորհիվ: Այս բակտերիաները նույնպես գտնվում են սիլոսացվող կերաբույսերի վրա:

Հետագոտղներից վորանք հաստատում են, վոր քացախաթթուն կենդանիների սննդառության, նյութերի փոխանակության ժամանակ ախորժաբեր ազդեցություն ե ունենում, բայց եր սննդարար արժեքականությամբ կաթնաթթվի հետ յերեք չի կարող համեմատվել:

Սիլոսացված կերանյութերի բորբունելը—թթվող կերի մեջ միկրոբանիզմներն սկզբնական շրջանում շատ արագ զարգանում են. նրանց թիվը մի քանի որվա ընթացքում 1 զրամ նյութի մեջ կարող ե հասնել մինչեւ 1 միլիլիտրի: Հենց այդ ե պատճառը, վոր նորմալ պայմաններում սիլոսացվող կերերի մեջ կարմ ժամանակվա ընթացքում մեծ քանակությամբ կաթնաթթու յե կուտակվում: Բույսերի մեջ յեղած սպիրտակուցային նյութերը, թաղանթանյութը և այլ միացություններ մասնակի փոփոխու-

թյունների յեն յենթարկվում: Այդ պրոցեսներին զուգընթաց՝ կերի մեջ ջերմությունը վորոշ չափով բարձրանում է: Կաթնաթթվային բակտերիաների գործունեյության հետեւ վանքով առաջացած կաթնաթթուն, մեծ քանակությամբ կուտակվելու դեպքում, խիստ ազդում ե գործող միկրոբների վրա, առաջին հերթին վոչ-կաթնաթթվային բակտերիաների, իսկ հետո նաև կաթնաթթվային բակտերիաների վրա: Սիլոսի մեջ գործող միկրոբների թիվը կաթնաթթվի ազդեցության տակ հետզհետեւ պակասում է: Կաթնաթթվային բակտերիաների գործունեյությունը վերջանալու հետ միասին վերջանում ե նաև կերի հասունացման պրոցեսը, վորից հետո նման սիլոսով արգեն կարելի յե անառուններին կերակրել:

Նայած թե ինչպիսի կերաբույսեր են յենթարկվում սիլոսացման, ըստ այնմ ել սիլոսի հասունացման առողջությունը կարող ե տարբեր լինել. յեթե կերաբույսերը քաղված են դալար վիճակում, նրանց սիլոսի հասունացման պրոցեսը շատ շուտ ե վերջանում, մոտ 1—2 շաբաթվա ընթացքում, վորից հետո սիլոսը կարելի յե ոգտագործել իսկ յեթե կերաբույսերը քաղված են այն ժամանակ, յերբ արգեն ցողունները կոպտացել են, սիլոսի հասունացումը տեղի յե ունենում շատ դանդաղ և կարող ե տևել մինչև 10 շաբաթ: Առհասարակ սիլոսի հասունացման պրոցեսը միջին հաշվով վերջանում ե 4—5 շաբաթվա ընթացքում:

Փորձերը ցույց են տվել վոր համեմատաբար շատ շուտ ե հասունանում հացազգիներից պատրաստված սիլոսը:

Սիլոսացման ժամանակ պիտի աշխատել վոր կաթնաթթվի կուտակման պրոցեսում կերի մեջ ոդ չմտնի: Ոդի հետ կերի մեջ կարող են անցնել բորբոսանկերի բազմաթիվ սաղմեր, վորոնք ոդի առկայությամբ կարող են կերի մեջ հեշտությամբ ծլել և պատճառ դառնալ կերի բորբոսան: Ավելին, նրանք զարգանում են թույլ թթվային պայմաններում, դրա համար ել կաթնաթթվի առկայությամբ սրանք իրենց շատ լավ են զգում, արագ գործում են և կաթնաթթվի ազդեցությունը կերի մեջ կարճ ժամանակից հետո թուլացնում են: Դրա հետևանքով ել կերը վնչ միայն բորբոսանում ե, այլև դրա հետ միասին նեխվում ե: Վերջին պրոցեսի դեպքում գործում են նեխման միկրոբները, բորբոսանկերը անվելով կաթնաթթվով, վերջինս վեր են ածում ածխաթթվի և ջրի: Բայց յեթե

սիլոսացվող կերի մեջ ոդը բացակայում ե, բորբոսանկերը յեր-  
բեք չեն կարող զարգանալ: Նման գեղքերում նրանք յերեմն լի-  
նուում են սիլոսի միայն վերին շերտում, վոր նույնպես ցանկալի  
չե: Բորբոսած սիլոսի վորակը շատ ցածր ե, բորբոսած կերը  
անասունները չեն ուտում: Սիլոսի բորբոսաման դեմ պայքարելու  
համար ամենից առաջ պետք ե աշխատել վոր կերերի մեջ ոդ  
չմտնի: Դրա համար հորի մեջ կերաբույսը շատ խիս պետք ե դա-  
սավորել և սալահարման (տրամբովկա) յենթարկել, ուրիշ նյու-  
թերով (թեփ, ծղոտ) ամուր ծածկել, վորով կարգելի ոդի մուտ-  
քը: Հիշյալ նյութերով ծածկերուց հետո, հորի բերանը պետք ե  
ամրացնել և սվաղել: Հորը կամ աշտարակը պիտի կառուցել այն  
հաշվով, վոր սիլոսը հասներուց հետո առաջին հերթին ոգտագործվի  
վերին շերտը:

Սիլոսացվող կերի մեջ այլ ֆիմիական նյութերի առաջացման  
պատճառները.—Ամեն անգամ, յերը կերաբույսերի սիլոսացում ե  
կատարվում, բացի վերը հիշված պրոցեսներից և այդ պրոցեսնե-  
րի հետևանքով առաջացած նյութերից՝ առաջ են գալիս նաև այլ,  
յերկրորդական պրոցեսներ. վերջիններս իրենց հերթին առաջաց-  
նում են այս կամ այն քիմիական նյութերը, վորոնք, անկաս-  
կած, ազդում են սիլոսի վորակի վրա:

Ամենից առաջ պետք ե գիտենալ, վոր գլխավոր պրոցեսներ  
առաջնող (կաթնաթթվային—յուղաթթվային և այլն) առան-  
ձին ֆիզիոլոգիական խմբերի բակտերիաները լինում են տարբեր  
տեսակների:

Զպետք ե մոռանալ, վոր սիլոսի թթվեցման պրոցեսը մի  
քանի փուլ ե անցնում: Յեվ այդ առանձին փուլերում ել (նայած  
թե պայմաններն ինչպես են դասավորվում) զործում են տարբեր  
տեսակի միկրոբներ, վորոնք սիլոսացվող կերի վորակի վրա թող-  
նում են այս կամ այն ազդեցությունը:

Սիլոսացման յենթարկվող բուսական մասսան սննդատու  
նյութ ե հանդիսանում տարբեր տեսակի բակտերիաների համար.  
վերջիններս հորի մեջ են անցնում բուսական մասսայի հետ: Հորի  
մեջ միկրոբներն ողտվելով բույսերի անկենդան վիճակից, սկսում  
են սնվել նրանց սննդանյութերով: Այդ միկրոբների կազմի մեջ  
միշտ ել լինում են եպիֆիտային միկրոբներ, հողի մեջ գտնվող  
բակտերիաներ և այլն: Եպիֆիտային միկրոբները բույսերի կեն-

դանության ժամանակ գտնվելով նրանց մակերեսի վրա, պետք ե  
յենթադրել վոր նրանք այս կամ այն սննդանյութի նկատմամբ  
այնքան ել պահանջկոտ չեն: Նման միկրոբների կազմի մեջ են  
մտնում գույներ առաջացնող մի քանի բակտերիաներ, յերեմն  
նաև աղիքային-դադաղ առաջացնող բակտերիաներ, սպորավոր բակ-  
տերիաներ և տարբեր տեսակի կաթնաթթվային բակտերիաներ:

Մեռած բուսական մասսայի մեջ սիլոսացման առաջին շրջա-  
նում այդ միկրոբներն արագ զարգանալով, մի շաբաթ փոփոխու-  
թյուններ են առաջացնում կերի մեջ: Այդ փոփոխությունների  
առաջացման ժամանակ պակաս գեր չեն խաղում նաև բուսական  
ֆերմենտները<sup>1</sup>, վորոնք բույսերի մեռնելուց հետո նույնպես գոր-  
ծում են և զանազան փոփոխություններ առաջացնում:

Առաջին շրջանում գործող այդ միկրոբներից, նայած ջեր-  
մության աստիճանին, առաջնությունը պատկանում է կաթնա-  
թթվային բակտերիաներին, վորոնք հետզհետե իրենց գործու-  
նեյությունն ուժեղացնելով, բավական թթվությունն են կուտա-  
կում: Առաջին շրջանում գործող բակտերիաները կաթնաթթվային  
բակտերիաների զարգացման ինտենսիվությունից մեռնում են:  
Այդ փուլին հաջորդում ե յերկրորդը, վորի ընթացքում տեղի յեն  
ունենում հասունացման գլխավոր խմբումները: Կաթնաթթվային  
խմբմանը գուգընթաց գործում են նաև շաքարանկերը և շա-  
քարանկերի նման միկրոբները, ինչպես՝ որինակ՝ զինու շաքա-  
րանկերը, գորուլաները, միկրոտերմաները և այլն: Հավանական  
է, վոր այս փուլում են զործում նաև բուսական մի քանի տե-  
սակի ֆերմենտներ:

Նորմալ պայմաններում սիլոսացման պրոցեսը կամ կերի  
հասունացման գործը յերկրորդ փուլով ել վերջանում ե:

Վորոշ գեղքերում, յերբորդ փուլն անկանոն ընթանալու  
ժամանակ, գործում են նաև բորբոսանկերը, հատկապես վրձի-  
նավոր տեսակները (պինհցիլիում զլայկումը), հուլունքավորները  
(ասպերգիլուս նիզերը) և այլն, վորոնք կաթնաթթուն քայքա-  
յում են: Տարբեր տեսակի միկրոբների գործունեյության հետե-  
վանքով, սիլոսացվող մասսան տարբեր կերպ ե քայքայվում,

1 Ֆերմենտներ են կոչվում կենդանի օրգանիզմում չնչին քանա-  
կությամբ գտնվող այն նյութերը, վորոնք ուժեղացնում և արագացնում են  
կենդանու ուսանելում կատարվող կենսական պրոցեսները:

գրա համար ել սիլոսի մեջ ստանում ենք խայտարդետություն, կամ նյութերի խայտարդետ քայլքայում: Սիլոսացման ժամանակ հիմնական ուշադրություն պետք է դարձնել կաթնաթթվային պլոցեսի և այդ պլոցեսին նպաստող պայմանների վրա:

### ՄԻԼՈՍԱՑՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԵջ ԿԱԹՆԱԹԹՎԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անկախ այն բանից, թե ինչ ձևով և պահպում կերանյութը, անհրաժեշտ ե, վոր նրա մեջ կաթնաթթվային խմորումը նորմալ ընթանա և մեծ քանակությամբ կաթնաթթու կուտակվի:

Սիլոսացվող նյութի մեջ կաթնաթթվային բակտերիաների գործունեյությունը, հետևապես և կաթնաթթվային նորմալ խմորումը, ինքնին արգելակում և նեխման բակտերիաների զարգացումը: Դրա համար ել սիլոսացվող բուսական մասսան լավորակ կեր և դառնում:

Բույսի ազդեցուրյունը.—Ինչպես վերևում հիշատակեցինք, կաթնաթթուն առաջ ե գալիս բույսի մեջ գանված շաքարի խմորություն. դրա համար ել սիլոսի մեջ նա պետք է անհրաժեշտ քանակությամբ լինի, հակառակ զեպքում, սիլոսացվող կերի մեջ թթված շատ ցածր կլինի, նեխման բակտերիաները կարող են արագ զարգանալ և նյութերի նեխման պատճառ դառնալ:

Բոլոր տեսակի բույսերն ել սիլոսացնել չի կարելի: Այն բույսերի հետ, վորոնք շաքարից ազքատ, սպիտակուցային նյութերով շատ հարուստ են, ինչպես են, որինակ, թիթեռնածաղկավոր բույսերը (առվույտ, յերեքնուկ, վիկա, կորնգան և այլն), պետք ե խառնել շաքարով հարուստ բույսեր, կամ շաքարի մեծ տոկոս պարունակող առանձին նյութեր, որինակ՝ շաքարի արդյունաբերության ժամանակ ստացված մնացորդներ և այլն:

Սիլոսացվող բուսական խառնուրդը պետք է պարունակի առնվազն 1% շաքար: Պետք ե նկատի ունենալ, վոր շաքար պարունակող բույսի հասունացման ըրջանում շաքարի տոկոսը համեմատաբար ցածր ե, քան հասունանալուց առաջ: Դրա համար ել սիլոսացվող բույսերը պետք է քաղել ծաղկման ժամանակ: Դրանով շաքարի բավարար տոկոսն ապահովում է սիլոսացվող բույսի մեջ: Սիլոսացման համար կարելի յե ոգտագործել հետեւ-

յալ բույսերը և գյուղատնտեսական արդյունաբերության մեջ ստացվող մնացորդները.

1. Յեփիպտացորենը, արևածաղիկը, սորգոն, գետնախնձորը, կերի կաղամբը, սոյան, դոնիկը, վիկ-վարսակի խառնուրդը՝ Սուլանի խոտը, առվույտը, կորնգանը, յերեքնուր և այլն:

2. Արմատա-պալարապտուղների և բանջարանոցային կուլտուրաների փրերը (ՅՈՒՎԱ)՝ ճակնդեղի, շաղգամի, կոնդեղի, գաղարի, կարտոֆիլի, կաղամբի տերեների փրերը և այլն:

3. Մոլախոտերից, ճահճային և գետային բուսականությունից սիլոսացման լավ բույսեր են հանդիսանում ուղտափուշը, տարրեր տեսակի քոլախոտեր, թալը, յեղինջը, բոշխը, յեղեղը և այլն:

4. Գյուղատնտեսական նյութերի վերամշակման արդյունաբերության ժամանակ ստացված թափթփուկները, վորոնց մեջ մեծ տեղ է բռնում մզուքը կամ տկուցքը:

5. Բանջարանոցային կուլտուրաներից կարելի յե ոգտագործել կերի դղումը և կերի ձմերուկը:

Սիլոսացման նյութ կարող են ծառայել շատ տեսակի արմատա-պալարապտուղներ, վորոնցից առանձնապես կարեռ ե և վերջին ժամանակներս առանձնապես մեծ ընդունելություն ե դտել կարտոֆիլը, հատկապես խոզաբուծական կոլտնտեսություններում և խորհանուսություններում:

Սիլոսացման համար ոգտագործվում են մարգագետնային խոտերը և բնական ու ցանովի խոտերի ավելուկները—այսինքն քաղից հետո մնացած մասսան: Յեկ, վերջապես, սիլոսացման համար ոգտագործում են նաև հումունային խոտերը. վերջիններս մարգագետիններում և այլ բուսական ծածկոցում բավական մեծ մասսա յեն ներկայացնում:

Սիլոսացվող նյութի ջերմուքյունը և խմբման բնույթը.—Սիլոսացման ժամանակ միջավայրում յեղած ջերմությունը խոչը նշանակություն ունի: Այս մասին գրականության մեջ խիստ հակասական տվյալներ կան: Ըստ Գրիփիցի տվյալների՝  $18^{\circ}$ — $30^{\circ}$ -ում իր թե գործում են քացախաթթվային բակտերիաները,  $35^{\circ}$ — $40^{\circ}$ -ում՝ յուղաթթվայինները, իսկ  $50^{\circ}$ -ում՝ կաթնաթթվային բակտերիաները: Այս կարծիքը միանգամայն սխալ է: Հիշյալ յերեք տեսակի բակտերիաների մանրամասն ուսումնասիրությունները

շույց են տվել, վոր դբանք բոլորն ել իրենց զարգացման համար միենույն աստիճանի ջերմություն են պահանջում: Յեթե կաթնաթթվային բակտերիաները լավ են աճում  $30-40^{\circ}$ -ում, նույնը լավ են աճ յուղաթթվային ու քացախաթթվային բակտերիաների համար: Պարզ ե, վոր, յեթե սիլոսացվող կերի մեջ ջերմությունը հավասար է  $30^{\circ}$ -ի, ապա հիշյալ բոլոր խմբերի բակտերիաները միենույն արագությամբ և միաժամանակ կարող են զարգանալ: Անցանկալի բակտերիաների գործունեյությունն արգելակող գործոնը վհչ թե ջերմությունն ե, այլ կաթնաթթվի կուտակման ինտենսիվությունը: Փորձերը ցույց են տվել, վոր կաթնաթթուն համեմատաբար ավելի արագ ե կուտակվում բարձր ջերմաստիճանում, քան ցածր, վորի ազդեցության տակ յուղաթթվային բակտերիաների գործունեյությունը խիստ թուլանում ե: Բայց շատ բարձր ջերմաստիճանն ել վնասակար ե, վորովհետեւ բարձր ջերմաստիճանը կաթնաթթվային բակտերիաների գործունեյությունը կասեցնում ե:

Գործնականում նկատված ե, վոր սիլոսացման ժամանակ կերի տարբեր շերտերում ջերմությունը տատանվում է  $20-30^{\circ}$ -ի միջև, իսկ այդ աստիճանում թթու կուտակող միկրոռդանիզմները բավական լավ են աշխատում և այդ պայմաններում ստացված կերանյութը լավորակի յել լինում: Ուստի սիլոսացուի մեջ ջերմությունը բարձրացնելու ամեն մի միջոցառում ավելորդ ե:

Սիլոսացվող կերի մեջ ցածր ջերմաստիճանը նույնպես, ինչպես բարձր ջերմաստիճանը, ցանկալի չե, քանի վոր այդ և կաթնաթթվի կուտակումը դանդաղեցնում ե: Սիլոսը պետք ե պաշտպանված լինի ցրտից: Անհրաժեշտ է հիշատակել նաև այն, վոր ցուրտ ժամանակ, յերբ կերի մեջ շատ դանդաղ և ջերմությունը բարձրանում, ընդունված ե, որինակ՝ Գերմանիայում, սիլոսացվող կերին ավելացնել հատուկ կաթնաթթվային մակարդ, վորը հնարավորություն ե տալիս կերի մեջ կաթնաթթվի կուտակման պրոցեսն ուժեղացնել:

Խոնավության ազդեցությունը սիլոսացլող կերի վարակի վրա—Փորձերը ցույց են տվել, վոր սիլոսացման ժամանակ ոպտիմալ խոնավությունը պետք է լինի  $70-75\%$ : Յերբ խոնավությունը գրանից բարձր ե, պետք ե ավելացնել չոր բույսեր, ինչպես՝ որինակ՝ չոր հարդ կամ թեփուկներ: Նկատված ե, վոր

շատ չոր կերանյութերը սիլոսացնելիս՝ զարգանում են բորբոսանկեր: դա նրանից ե, վոր այդ նյութերը չեն մամլվում և նրանց արանքներում բավական ող ե մնում: Իսկ շատ խոնավ կերանյութերի մեջ առաջ ե զալիս յուղաթթվային խմորում: Շատ խոնավության գեպքում, նաև՝ ջերմությունը ցածր ե լինում, և յերկրորդ՝ լուծված շաքարային նյութերը ջրի հետ իջնում են հորիներքելի մասը, վերակի շերտերում, շաքարի քչության հետևանքով, յուղաթթվային բակտերիաները գործում են արագ, վորովհետևեա կաթնաթթվային բակտերիաները նման պայմաններում շատ թույլ աճեցնություն են ունենում: Բացի դրանից՝ շատ խոնավ լինելու պատճառով կաթնաթթուն կարող ե լուծվել նաև ջրի մեջ ու ներծծվել, վորի հետևանքով վնասակար բակտերիաները կազատվեն կաթնաթթվի ազդեցությունից և կսկսեն լավ գործել:

Խոնավության ազդեցության ուսումնասիրության առթիվ վերջին ժամանակներս կատարվել են բազմաթիվ փորձեր, վորոնց կապակցությամբ ուշադրության արժանի յեն Ամոսի և Վիլյամարտաշնատիճուները: Ըստ այս հեղինակների՝ միենույն նյութը սիլոսացնելիս, նայած թե ինչպիսի պայմաններում ե տեղի ունենում սիլոսի հասունացման պրոցեսը, ստացվում ե հինգ տիպի սիլոս:

1. Մուգ—գորշ գույնի քաղցր սիլոս, վորն ստացվում է  $45-50^{\circ}$ -ի ջերմության պայմաններում: այս դեպքում թթվեցման ժամանակ մեծ քանակությամբ նյութեր են կորչում:

2. Թույլ շագանակագույնի կամ դեղնա-շագանակագույնի բրու սիլոս, վորն ստացվում է միջին հասունացում ունեցող բույսերից: Խոնավությունը հավասար է  $70\%$ -ի, իսկ խմորումն ընթանում է ջերմության  $30-37^{\circ}$ -ում:

3. Կանաչ, պտղային արմատով սիլոս, վորն ստացվում է շատ յերիտասարդ բույսերից: Այս սիլոսն անբավարար թթվությունը ունի, հասուցման ջերմությունն է  $22-34^{\circ}$ :

4. Մուգ—գորշ գույնի բրու սիլոս, վորն ստացվում է հասունացած կերից, սիլոսն ունի անխորժ համ ու հոտ, խոնավությունը չափից գուրս շատ ե:

5. Բորբոսած սիլոս—ստացվում է շատ չոր կերերից, նրա մեջ առաջանում ե ամոնյակ:

ՏԱՐԲԵՐ ԶԵՎԵՐՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՄԻԼՈՇԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ  
ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄՆ ՀՍՏ ՄԻԿՐՈԲՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ

Սառը սիլոսացում.—Սառը սիլոսացում կոչվում է նրա համար, վոր սիլոսացման ժամանակ կերի մեջ ջերմությունը 36—38°-ից չի բարձրանում: Սիլոսացման այս յեղանակն ամենալնդունվածն ու տարածվածն է: Սառը սիլոսացմանը նաև առում են «թթու սիլոս»: Սառը սիլոսացման ժամանակ, սիլոսացման յենթակա բույսերը քաղելուց հետո անմիջապես լցնում են հորի կամ աշտարակի մեջ: Յեթե կարիք կա, բույսերը նախորոք մանրացնում են: Հորի մեջ լցված բույսն աստիճանաբար լավ պնդացնում են և մինչև բերանը լցնում: Հորի մեջ բույսերի դասավորումն այնպես են կատարում, վոր հետագայում կերամասսան չնստի: Հորը բերներերան լցնելուց հետո բերանն ամուր ծածկում են հարդով, թեփուկներով և կամ սվաղում են կավով: Յեթե հորը կամ աշտարակը մեծ չի, վերին մեկուսացնող շերտը փորոշանրության կափարիչով ծածկում են կամ տախտակով ծածկում և վրան ծանր քար են դնում: Այդ բոլորն արգում են նրա համար, փորպեսզի հորի վերին շերտն ոդի նկատմամբ լինի անթափանցիկ: Վորոշ հեղինակների փորձերը ցույց են տվել վոր ծածկոցի համար կարելի յե ոգտագործել տարեկանի կամ ցորենի կալից ստացված մանրունքները կամ տականքը, վորոնք փորոշ քանակությամբ սերմեր են պարունակում: Տարեկանի կամ ցորենի մանրունքը նախորոք թրջում են իրեն ծածկոց գործածելու համար: Հորն այդ նյութերով ծածկելուց հետո, նրանց մեջ յեղած սերմերը ծլում են և խիտ կանաչ մասսայով ծածկում: այս ծածկոցը չի թողնում, վոր իր միջով դրսից ոդ ներթափանցի: Սառը սիլոսացումը վոչ միայն հարմար ե քաղի համար, այլև նորմալ պայմաններում շատ լավ արդյունքներ ե տալիս: Այս յեղանակով կերերը սիլոսացնելիս հորի մեջ ջերմությունը շատ քիչ ե բարձրանում, ամենաշատ ջերմությունը, այն ել վորոշ շերտում, հազիվ հասնում է 28°-ի: Սառը սիլոսացման ժամանակ ամենացանկալին համարվում է 25—30°-ի ջերմությունը: Հենց այս տեսակետից ել սառը սիլոսացումը խիստ տարբերվում ե սիլոսացման մյուս բոլոր յեղանակներից: Վերջիններս պահանջում են ավելի բարձր ջերմաստիճան: Սառը սիլոսացման ժամանակ 25—30°-ի ջերմու-

թյան պայմաններում հասունացման պրոցեսները շատ լավ են ընթանում, և մինք ատանում ենք թթվաշ կեր:

Սիլոսացման ժամանակ կերի մեջ ջերմության բարձրացումը հետեւանք է միկրոբների գործունեյության: Այդ որգանիզմները զարգանալով, կերի կազմի մեջ խիստ փոփոխություն են առաջացնում: տեղի յե ունենում խմորում, վորի հետեւանքով բուսական բջիջների մեջ յեղած ջերմությունը դուրս ե գալիս և դրա հետեւանքով ել կերը տաքանում է:

Կերի տաքացումն ավելի արագ ե տեղի ունենում, յերբ թթվածինն ազատ մուտք ե գործում կերի մեջ: Թթվածնի աղղողցության տակ նույն նյութը, վոր անթթվածնային պայմաններում քայլայիլով, վորոշ աստիճանի ջերմություն եր տալիս, ավելի արագ ե ոքսիդանում և իրենից մեծ քանակությամբ ջերմություն ե արձակում: Այս գե գքում, այսինքն թթվածնի ներկայությամբ, ավելի շատ որգանական նյութ ե ծախսվում: Սառը սիլոսացման ժամանակ այդ նյութերի շատ փոքր մասն ե ծախսվում, դրա համար ել սառը սիլոսացումը տնտեսապես ավելի ձեւունություն ունի, վորովհետեւ այս գեպքում մեծ քանակությամբ կեր ե տնտեսվում:

Կերի տաքացման ժամանակ վորոշ նշանակություն ունենալուական ֆերմենտները:

Փորձերը ցույց են տվել վոր յեթե սառը սիլոսացման ժամանակ սիլոսացվող բուսական մասսան ունի նորմալ խոնակություն և շաքարի բավարար քանակ, ապա կաթնաթթվային բակտերիաներն իրենց զարգացման ինտենսիվությամբ միշտ ել առաջնություն են գրավում: դրա հետեւանքով կողմնակի բակտերիաների (հատկապես յուղաթթվային) աճը խիստ թուլանում է: Սառը սիլոսացումը խոշոր կառուցվածքներում կատարելիս աննդանյութերի կորուստ շատ քիչ ե լինում: Դա բացարձում ե նրանով, վոր մեծ կառուցվածքների (սիլոսի խոշոր աշտարակներում) մեջ սիլոսացվող մասսան արտաքին միջավայրի հետ համեմատաբար քիչ տոկոսով և շփման մեջ լինում, իսկ սիլոսացման ժամանակ նեխման պրոցեսները հատկապես տեղի յեն ունենուած կերանյութի այն մասերում, վորոնք արտաքին միջավայրի հետ շփման մեջ են գտնվում: Խոշոր կառուցվածքների յերկրորդ առա-

վելությունն այն ե, վոր այդ գեղաքում սիլոսի ինքնարժեքը ցածր է լինում: Մեծ կառուցվածքներում հնարավոր ե կերի փոխադրումը մեխանիզմի յենթարկել:

ՍԻԼՈՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻՆ ԱՌԱՋՐՎՈՂ  
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. Սիլոսացման համար ոգտագործվող հորերի պատերը և հատակը չպետք ե խոնավություն և գաղեր անցկացնեն: Պատերը պետք ե կառուցել այնպիսի նյութերից, վորոնք կաթնաթթվին դիմացկուն են: Որինակ՝ կերը կաթնաթթվի աղբեցությունից քայլքայվում ե: Ամեն կերպ պետք ե խոռափակել կրաշաղախ պատեր կառուցելուց:

2. Պատերը պետք ե կառուցել այն հաշվով, վոր սիլոսացած կերը ձմեռված ցրտից և ամառվա շողից պահպանեն և հորի մեջ նորմալ ջերմաստիճան լինի:

3. Հորը մթնոլորտային տեղումներից պաշտպանելու համար վերին մասում պետք ե ունենա հատուկ հովանոցաձև պահպանիչ:

4. Սիլոսի հորը յերբ լիքն ե, յերբեք ող չպետք ե պարունակի, դրա համար ել կերը հորում նախապես պետք ե լավ մամել, կերաբույը հատուկ սիլոսամանրիչ մեքենայով նախորոք պետք ե մանրացնել 2—3 ամ մեծությամբ:

5. Հորի մեջ կերը հասունանալուց հետո, կերի աստիճանաբար նստելուց խոռափակելու համար, կերը միշտ ձնշման տակ պետք ե պահպի, դրա համար անհրաժեշտ ե հորն այնպես կառուցել վոր հնարավոր լինի վերեից ձնշել այդ նպատակին հասնելու համար հորի պատերը պետք ե հարթ, վողորկ լինեն, վորապեսզի ձնշումը հավասարաչափ տարածվի ամբողջ մասսայի վրա: Հորը կամ աշտարակը պետք ե կառուցել զլանաձև, կոր: Այս բուրը միջոցառումները նրա համար են, վոր հորի մեջ սիլոսացվող կերանյութը պահպանվի արտաքին մի շարք աղբեցություններից և ողի մուտքից: Մեզ մոտ, Խորհրդային Միության տարրեր վայրերում սիլոսի հորերը կառուցում են տարրեր շինանյութերից, նայած թե տվյալ շրջանն ինչպիսի հնարավորություններ ունի և վար շինանյութից կառուցված հորն ե լավ արդյունքներ տալիս ու ավելի եժան նստում: Ինչ նյութից ել հորը կառուցվի,

վերը հիշված պահանջներն անպայման պետք ե ապահովել, առանձնապես պետք ե հետեւ, վոր հորի ներսի պատերը հարթ և թթվադիմացկուն լինեն:

Ինչպես ասացինք, սառը սիլոսացման յեղանակն ամենանպատակահարմար և արդյունավետ յեղանակն ե: Հետագա մեր շարադրանքը մեծ մասամբ վերաբերելու յե սառը սիլոսացման ժամանակ առաջացած փոփոխություններին: Բայց քանի վոր վորոշ տեղերում կիրառվում են նաև սիլոսացման այլ յեղանակներ, այստեղ ավելորդ չեր լինի դրանց մասին նույնպես համառոտակի խոսել ցույց տալով այդ յեղանակների եյությունը և դրանց նշանակությունը սիլոսացման յենթակա կերի վորակի բարձրացման գործում:

Տաք սիլոսացում.—Տաք կամ «քաղցր» սիլոսացման եյությունն այն ե, վոր բուսական մասսան հորի մեջ գասավորում են վահանգամից, այլ աստիճանաբար, սիլոսացման յենթակա կերն ամեն անգամ հորի մեջ լցնում են 1—1,5 մետր հաստությամբ, չեն պնդացնում, և կերը 1—2 որ մնում ե փուխր վիճակում: Նման պայմաններում ողն ազատ յեկմուտ ե գործում կերի մեջ. դրա հետեւանքով, բույսերի վրա գտնված միկրոբներն սկսում են արագ գործել գործում են նաև բուսական ֆերմենտները. դրա արդյունքը լինում ե այն, վոր բուսական մասսայի մեջ ջերմությունն արագ բարձրանում ե:

Վորոշ հետազոտողների (որինակ՝ Միյերի) կարծիքով՝ բուսական մասսայի մեջ ջերմության բարձրացման պատճառը բուսական բջիջների ներմուեկուլային շնչառության պրոցեսներն են, վորոնց շնորհիկ կերի մեջ ջերմությունը հասնում է մինչև 45°-ի, իսկ հետագայում ջերմությունը բարձրանում է մինչև 70°—սա արդեն հետեւանք ե վորոշ տեսակի ջերմասեր բակտերիաների գործունեյության:

Գիտնականներից վոմանք ել կարծում են, թե կերի տաքացման ժամանակ միկրոբները յերկրորդական դեր են խաղում, և հիմնական պատճառը համարում են բուսական բջիջների շնչառության գործողությունը: Բանն այն ե, վոր բույսերը քաղելուց հետո նրանց առանձին բջիջներ դեռ վորոշ ժամանակ բարձրանքական կենսական պրոցեսներից անկախ, ինքնուրույն գործում են, նշանակում ե՝ շնչում են. նրանք շնչառության

ժամանակ ոգտագործում են թշի մեջ յեղած շաքարները։ Այդպիսի շնչառությունը կոչվում է ներմոլեկուլային շնչառություն։ Անկասկած, նման շնչառության ժամանակ խոշոր գեր են խազում բույսի ֆերմենտատիվ պրոցեսները։ Զնայած այդ բոլորին, փորձերը ցույց են տվել վոր բույսի միջմոլեկուլային շնչառության հետ միասին տեղի յեն ունենում նաև միկրոբիոլոգիական պրոցեսներ, վորոնց շարքում կատարվում են նաև կաթնաթթվային խմորման պրոցեսը, բայց այս պրոցեսն ընթանում է վճարվելով արագությամբ, ինչպիս սառը սիլոսացման ժամանակ։ Կաթնաթթվային բակտերիաների գործունեյությունը տաք սիլոսացման ժամանակ շատ թույլ է, վորի հետևանքով ել տռաջացած կաթնաթթուն հնարավորություն չի ունենում մնացած միկրոբների գործունեյությունն արգելակել։ Վերջիններս ողի ազատությունը են շատ արագ։

Եթեր բուսական մասայի մեջ ջերմությունը հասնում է  $45-50^{\circ}\text{-ի}$ , հորի մեջ լցնում են յերկրորդ բաժին բույսերը, զարձյալ նույն քանակությամբ։ այդ մասսան իր հերթին ճնշում է գործում հորում գտնված և արդեն միկրոբիոլոգիական պրոցեսների յենթարկված կերի վրա։ Յերկրորդ բաժինը մնում է փուլար, այսինք սկսվում են այն նույն պրոցեսները, ինչ վոր առաջին բաժնում, այսինք նույնական յերը ջերմությունը հասնում է  $45-50^{\circ}\text{-ի}$ , լցնում են յերբորդ բաժին բուսական մասսան և այդպիս աստիճանաբար լցնում են ամրող հորը։ Ներքեւ շերտերում, շնորհիվ վերին շերտի ճնշման, մասսան պնդանում է, ողի մուտքն՝ արգելակվում է, զրա հետ մեկտեղ այդ շերտերում միկրոբների գործունեյությունը թուլանում է, ջերմությունը պահպանում։

Հորն աստիճանաբար լցնելուց հետո, յերը վերին շերտում բոլոր պրոցեսները վերջանում են, հորի բերանն առանձին ծանրցներով ամրացնում են, առուր փակում և հասուլ հովանոցավոր կափարիչով ծածկում։

Փորձերը ցույց են տալիս, վոր յեթե առանձին ծանրոցով կերը չեն պնդացնում, վորոշ շերտերի փխրության հետևանքով, նրանց միջի ջերմությունը  $45-50^{\circ}\text{-ից}$  բարձրանում է մինչև  $70^{\circ}\text{-ի}$ , վոր միանգամայն անցանկալի յեւ այդ ջերմության մեջ կերը խիստ տաքանալով՝ նախ սեանում է և ազատ քայ-

քայվում։ անստունները նման կերը չեն ուտում, իսկ յեթե ուտում են, լավ չեն մարսում, և կաթնատուների մոտ կաթնատվությունը խիստ նվազում է։

Տաք սիլոսացման ժամանակ, բոլոր պայմանների առկայության պայմաններում անդամ, բոլոր շերտերում կերի տաքացումը հավասարաչափ չի կատարվում։ Ջերմությունը բարձրանում է միջին շերտերում, այդտեղից ջերմության շնորհիվ ջուրը գոլորշիանում է և արտաքին շերտերում սառելով՝ վեր և ածվում ջրի կաթիւների, վորի շնորհիվ ել կերի արտաքին մասերում ջերմությունը պակասում է։ Կերի այդ յերկու շերտերում տարրեր միկրոբիոլոգիական պրոցեսներ են կատարվում, կերն այդ յերկու մասերում տարրեր վորակ և ունենում։

Տաք սիլոսացման հեղինակի կաթծիքով, յերը կերի մեջ ջերմությունը բարձրանում է, բոլոր տեսակի միկրոբներն ու բուսական ֆերմենտները վոչնչանում են, և գրա հետևանքով, կերը վոչ մի փոփոխության չի յենթարկվում։ Բայց պետք և առել, վոր գա, գործնական կյանքում, ինչպիս ապացուցվել են առ տեսականորեն, բոլորովին հակառակ պատկեր և տալիս։

Ամենից առաջ անհրաժեշտ է հիշատակել, վոր համարյա բուլոր տեսակի բուսական ֆերմենտների գործունեյությունը դադարում է միայն  $70^{\circ}\text{ C-ի}$  ջերմության մեջ, իսկ  $70^{\circ}\text{-ից}$  բարձր ջերմությունը վորոշ ֆերմենտների, հատկապես ջերմասեր բակտերիաների ֆերմենտների գործունեյության համար յերբեմն սպահմալ ջերմություն և հանդիսանում։

Յերկրորդ՝ յեթե սովորական կաթնաթթվային բակտերիաներն այդ ջերմության դեպքում չեն զարգանում, ապա կան վորոշ տեսակի կաթնաթթվային բակտերիաներ (բակտերիում Ցելբրուկի), վորոնք  $17-50^{\circ}\text{-ի}$  ջերմության պայմաններում հրաշալի զարգանում են, բացի այդ՝ կան նաև շատ այլ տեսակի ջերմասեր բակտերիաներ (հատկապես նեխում առաջացնողներից), վորոնք կարող են զարգանալ համեմատաբար ավելի բարձր ջերմասահմանում։ Վերջին՝ տեսակի բակտերիաների գործունեյության շնորհիվ սովորականոցային նյութերի քայքայումը կարող և տեղի ունենալ  $70^{\circ}\text{ C-ից}$  ջերմության պայմաններում, իսկ թաղանթանյութի քայքայումը՝  $65^{\circ}\text{-ում}$ , ուլացինը՝  $70^{\circ}\text{-ում}$ , ծծմբային նյութերինը՝  $80^{\circ}\text{-ում}$  և այլն։

Շատ ավելի ջերմագիմասցկուն են այն միկրոբները, վորոնք սպորավոր ձեռք են տալիս: Քաղցր սիլոսացման ժամանակ կերի մեջ ջերմության բարձրացման գեպքում վոչ մի սպորավոր ձեռք մեռնում, այդ սպորավոր ձեռքը, ջերմության բարձր աստիճանին յերկար ժամանակ դիմանում և պահպանում են իրենց ծլունակությունը: Տաք սիլոսացման ժամանակ ջերմության բարձրացման գեպքում ավելի լավ են դիմանում յուղաթթվային բակտերիաների սպորավորված ձեռքը: Յերբ բարձր ջերմության ազդեցության տակ բոլոր տեսակի կաթնաթթվային բակտերիաները վոչնչանում են, յուղաթթվայիններից և վոչ մեկը (սպորավորը) չի մեռնում: Հենց այդ ե պատճառը, վոր սիլոսացվող մասսայի մեջ ջերմությունը պակասելուց հետո առաջին հերթին յուղաթթվային բակտերիաներն են սկսում զարգանալ: Այդ պատճառով նրանք այլևս վոչ մի մրցակից չեն ունենում և սկսում են սիլոսացվող մասսայի մեջ մեծ քանակությամբ յուղաթթու կուտակել, վորի հետեանքով ել կերն անախորժ համ ու հոտ և ստանում:

Տաք սիլոսացման յեղանակով պատրաստված սիլոսով անստուններին կերակրելիս կաթը յուղաթթվային բակտերիաներով միշտ ել վարակված և լինում: Այդպիսի կաթից պատրաստված կաթնամթերքները, հատկապես պանիրները, անորակ են լինում:

Տաք սիլոսացման զլիսավոր բացասական կողմն այն ե, վոր կերի սննդարար նյութերի զգալի տոկուր կորչում ե, այսպես որինակ՝ յեթե սառը սիլոսացման գեպքում կերի 8—11%-ն ե կորչում, ապա տաք սիլոսացման ժամանակ կորուսուր հասնում ե 26—30%-ի:

Եթե սոցիալիստական անասնապահության պայմաններում տաք սիլոսացումը հազիվ թե ընդունելի լինի, քանի վոր այդ յեղանակը վոչ միայն վատորակ կեր և մեծ կորուստ ե տալիս, այլև կերի սիլոսացման համար կառուցվելիք փոքր հորերն անհամատեղելի յեն մեր խոշոր սոցիալիստական տնտեսությունների պայմանների հետ: Այսինչ սառը սիլոսացման յեղանակն ունի բոլոր տվյալները մեր սոցիալիստական տնտեսության մեջ կիրառվելու համար:

Ելեկտրոսիլոսացում.—Սիլոսացման այս յեղանակը մնացած յեղանակների նկատմամբ նորագույնն ե: Ելեկտրոսիլոսացման

յեղանակը 1921 թվականին առաջադրել ե ինժեներ Շվեյցերը: Կերն այս յեղանակով սիլոսացնելու հիմնական նպատակն այն ե, վոր սիլոսացվող կերի մեջ ջերմությունը բարձրացվի ելեկտրական եներգիայի միջոցով: Այդ նպատակի համար ել հորերը հատուկ ձեռով են կառուցում և ելեկտրական լարերի միջոցով ջերմություն հաղորդում կերի մեջ: Վորոշ հեղինակների կարծիքով՝ ելեկտրական հոսանքի ազդեցության տակ, ինչպես նաև այլ ջերմությունների պայմաններում, կերի մեջ գտնվող բոլոր տեսակի միկրոբները վոչնչանում են, բայց փորձերը ցույց են տվել վոր ելեկտրական հոսանքի միջոցով ստացված ջերմությունը վոչ մի ազդեցություն չի թողնում: հատկապես ելեկտրական հոսանքը բակտերիաների վրա վոչ մի զգալի ազդեցություն չի թողնում:

Ելեկտրոսիլոսացման յեղանակով ստացված սիլոսն իր բոլոր կողմերով շատ ե հիշեցնում քաղցր սիլոսին (տաք սիլոսացման յեղանակով ստացված սիլոսին), միայն այն դրական տարրերությամբ, վոր տաք սիլոսացման գեպքում ջերմությունը բարձրանում ե բակտերիաների գործունեյության միջոցով, իսկ ելեկտրոսիլոսացման գեպքում՝ ելեկտրականության միջոցով: Ելեկտրոսիլոսացման դրական կողմերից մեկն այն ե, վոր կերի մեջ ջերմությունը հասրավոր ե կարգավորել և ջերմության ցանկացած աստիճանն ստեղծել, դրանով իսկ կարելի յե խմորման պրոցեսներին ցանկացած ուղղությունը տալ:

Բայց պետք ե ասել, վոր դեռ մինչեւ որս ել ելեկտրոսիլոսացման յեղանակը լավ մշակված չե, դրա մեթոդիկան պարզ չե: Այդ յեղանակով ստացված կերի մեջ միշտ միշտ կաթից պատրաստված պանիրը խիստ ցածրորակ ե լինում և անախորժ համ ու հոտ ե ունենում: Դա շատ հասկանալի յե, վորովհետև սիլոսացվող կերի մեջ գրեթե նույնպիսի միկրոբնուգիական պրոցեսներ են տեղի ունենում, ինչպիսին տեղի ելին ունենում տաք սիլոսացման յեղանակով պատրաստվող սիլոսի մեջ: Ինչպես տեսնում ենք, այս յեղանակով պատրաստված սիլոսն անորակ ե: Այս ե մի քանի այլ պատճառներով ելեկտրոսիլոսացման յեղանակը դեռ մինչեւ որս ել մաս-

սայական ընդունելություն չի գտել: Վիզների հաշվումներից յիշեռում ե, վոր ելեկտրոսիլոսացման ժամանակ-կերի մեջ միալորն ավելի թանգ ե նստում, քան հենց տաք սիլոսացման յեղանակով ստացված կերի մեջ միավորը, մի բան, վոր ելեկտրոսիլոսացման յեղանակի մասսայական կիրառման վրա խիստ ազդում ե:

Չնայած այդ բոլորին, ելեկտրոսիլոսացումը մեծ ապագա յե խոստանում, միայն թե նրա կիրառման ներկա մեթոդները պետք ե վերամշակել և նոր ձեռք առաջադրել:

Մեզ մոտ ելեկտրոսիլոսացման յեղանակը փորձնական շրջանում և գտնվում է առայժմ մասսայական ընդունելություն չունի:

Բացի սիլոսացման վերոհիշյալ յեղանակներից, զանազան վայրերում կիրառվում են նաև այլ յեղանակներ, վորոնք գրեթե նույն հետևանքներն են տապա, ինչ վոր նկարագրված յեղանակները:

Որինակ՝ ֆելցը, կայնբերգը, կապֆը և ուրիշները, սիլոսի հորի մեջ ջերմությունը բարձրացնելու համար, առաջարկում են բաց թողնել ջրային գործըներ, վոր նույնպես գործնական կյանքում լայն ընդունելություն չի գտել: Ֆինդերլինգը, հորի մեջ բուսական մասսայում գտնվող կողմանի միկրոֆլորային գործունելությունն արգելակելու և կաթնաթթվային բակտերիաների աշխատանքն ուժեղացնելու համար, խորհուրդ և տալիս սիլոսացվող կերը 0,1—0,2 % -ային աղաթթվով թրջել ըստ այդ հեղինակի, նման խոռության աղաթթուն անասուններին չի մնասում և այդ յեղանակով ստացված սիլոսը լավ վորակ և ունենում, բայց սիլոսացման այս յեղանակը նույնպես լայն ընդունելություն չունի:

Վերոհիշյալ յեղանակներից մեջ համար ամենաընդունելին և կարերը սառը սիլոսացման յեղանակն ե: Սիլոսացման այս յեղանակի գեպքում պետք ե ճշտությամբ կիրառել այն բոլոր ձեռնարկումները, վոր մենք հիշատակեցինք վերեռում: Հատկապես մեծ ուշագրություն պետք ե դարձնել հորի կառուցվածքի և բույսերի ընտրության վրա, վորովհետեւ սիլոսի վորակը կախված ե հենց գրանցից:

ԱԱՌԸ ՅԵՂԱՆԱԿՈՎ ՍԻԼՈՍ ՊԱՏՐՍՍՑԵԼՈՒ ԺԱՄՄԱՆԿ ԿԵՐԻ ՄԵԶ ԱՌԱՋԱՑՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՓԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սառը սիլոսացման ժամանակ սիլոսացվող կերի մեջ սկզբնական շրջանում վորոշ քանակությամբ ող և գտնվում: Ողի քանակությունը պայմանավորված ե նրանով, թե բուսական մասսան իրար վրա մնչպես և զասավորված, ող շատ ե լինում, իսկ յեթե իրա և զասավորված, ող քիչ ե լինում: Այդ ողի ազատ թթվածինն սկզբնական շրջանում անմիջապես ոգտագործվում ե թթվածնասեր միկրոբների և այլ ոքսիգենացման պրոցեսների կողմից: Ազատ թթվածինն ոգտագործվելուն զուգընթաց առաջ ե գալիս ածխաթթու դագ: Վերջինս որգանական նյութերի քայլացման վերջնական արդյունքն ե: Առաջին շրջանում ածխաթթու գազն առաջ ե գալիս բուսական բջիջների շնչառության ժամանակ, վոր կարող ե տեղի ունենալ թթվածնի բացակայության գեպքում՝ ներբջջային շնչառության պայմաններում: Այս գազն առաջ ե գալիս նաև մի քանի միկրոբների անթթվածնային շնչառության գեպքում: Այդ միկրոբները մասնատելով որգանական նյութերը, հատկապես շաքարները, մի կողմից առաջացնում են որգանական թթուներ, մյուս կողմից՝ ածխաթթու դագ:

Ածխաթթու գազը ծանր գազ ե. այդ գազը հետզհետե շատանալով, լցվում է սիլոսացվող կերի արանքները, զրանով իսկ արգելում և ողի մուտքն այլտեղ, և, այդպիսով, մեծապես նոպաստում սիլոսի պահպանմանը: Ածխաթթուն միկրոբների զարգացման վրա թունավոր ներգործություն և թողնում: Ածխաթթուն թունավոր և նաև մարդկանց համար եւ յերբ սիլոսի հորը բաց և արվում, անհրաժեշտ և ստուգել այդ գազի առկայությունը: Այդ հեշտությամբ կարելի յե իմանալ վառածուցկու միջոցով: յեթե լուցկին հանդչում ե, կնշանակի ածխաթթուն շատ ե. այս գեպքում հորի բերանը վերեկից պետք ե բանալ վորպիսվի ածխաթթուն գուրս գա, իսկ վերցրած կերն եւ նախքան կերակրել, վորոշ ժամանակ փոել վորպեսզի նրա մեջ յեղած գազը նույնպես դուրս գա. բայց յեթե լուցկին չի հանգչում, նշանակում ե ածխաթթու չկա: Ածխաթթու գազը շատանում և սիլոսի հասունացման սկզբնական շրջանում, իսկ հետո

պակասում եւ Պակասելու պատճառն այն ե, վոր առաջացած ածխաթթուն հորի բերանից ողի մեջ և ներծծվում: Կերի մասսայի մեջ ածխաթթվի պակասելն անցանկալի յեւ համարվում, դրա համար ել հորի կառուցման ժամանակ այս հանդամանքը նույնպես հաշվի պետք ե առնել. կերամասսայում առաջացած ածխաթթուն պետք ե մնա սիլոսի մեջ մինչև նրա գործածելը:

Սիլոսացվող կերի մեջ բացի ածխաթթվից, յերբեմն առաջ են գալիս նաև ջրածին և մեթան գազերը: Սրանք ավելի շատ առաջանում են սիլոսի աննորմալ հասունացման ժամանակ: Ջրածին և մեթան գազերը մեծ մասամբ առաջ են գալիս յուղաթթվային խմորման ընթացքում: Այս գազերը սիլոսի մեջ բոլորովին ել ցանկալի չեն, չնայած վոր նրանք շուտ ցնդում են:

Ի՞նչպես ե փոփոխվում ջերմությունը.—Սիլոսացվող կերի մեջ ջերմությունը նույնպես փոփոխական ե. սկզբնական շրջանում կերը հորի մեջ համարյա նույն ջերմությունն ունի, ինչ վոր արտաքին միջավայրը բայց յերբ բուսական մասսայի մեջ միկրօբիոգիական պրոցեսներն սկսվում են, ջերմությունը, անկախ դրա ջերմությունից, կարգավորվում ե: Հորում առաջացած ջերմությունը սիլոսի տարբեր մասերում տարբեր ե, որինակ՝ ներքին շերտի մեջ ջերմությունը ցածր ե. պետք ե յենթադրել, վոր հորի հիմքը մեծ չափով ազդում ե ջերմության վրա: Ջերմությունը ցածր ե նաև պատերին կամ սիլոսի մասերում, իսկ միջին և վերին շերտերում համեմատաբար բարձր ե: Տարբեր վայրերում պատրաստված սիլոսի մեջ ջերմությունը նույնպես տարբեր ե, ընդհանրապես այն տատանվում ե  $6-40^{\circ}$ -ի միջև: Շատ բարձր ջերմաստիճանը ցանկալի չե, քանի վոր այդ դեպքում կերի կորուսը շատ ել լինում և խմորումները նորմալ չեն ընթանում: Ցածր ջերմաստիճանը նույնպես ցանկալի չե, այս դեպքում ել հասունացումը նորմալ չի ընթանում: Լավորակ սիլոսի հասունացման ժամանակ ջերմությունը կերի մեջ պետք ել լինի  $25-35^{\circ}$  ըստ Ցելսիուսի:

Սիլոսի մեջ խմորումներից առաջացած պրոդուկտները.—Սիլոսի հորի մեջ, նայած թե ինչ վորակի կամ ինչ քիմիական կազմ ունեցող բուսական մասսա յեւ գտնվում, խմորման ժամանակ տարբեր պրոդուկտներ են առաջանում: Սիլոսացվող այն բույսերը, վորոնք բացար շատ են պարունակում, խմորումից

արագ տալիս են որդանական թթուներ (կաթնաթթու): Յեթև սիլոսացվող բուսական մասսան շաքար քիչ ե պարունակում, ապա խմորումից մեծ քանակությամբ յուղաթթու յեւ կուտակվում: Բացի կաթնաթթվից ու յուղաթթվից՝ որդանական նյութերի խմորումից կարող ե կուտակվել նաև վորոշ քանակությամբ քացախաթթու և պրոպիտոնական թթու: Թե այս կամ այն բույսի սիլոսացման ժամանակ ինչպիսի և ինչ քանակությամբ որդանական նյութեր են առաջանում, ցույց ե տալիս ներքոնիշյալ աղյուսակը: Աղյուսակում բերված թվերը ցույց են տալիս, թե սիլոսացվող նյութի չոր մասսայի մեջ թթուները վոր տոկուն են կազմում:

#### Աղյուսակ № 1

Բ ո ւ յ ս ե ր	Քացախաթթու	Պ ը ո պ ի ո ն ա - կան թթու	Ց ո ւ ղ ա - թթու	Կ ա թ ն ա - թթու
Յեգիպտացորեն	1,8—4,0	0,2—0,3	—	4,0—6,1
Արևածաղիկ	1,1—3,4	0—0,4	0—3,1	1,5—3,5
Վարսակ	0,8	0,5	0	4,0
Վոլոս	1,9	0,1	0	6,0
Վարսակ վլուսի հետ	1,5—2,2	0,1—0,2	0	4,1—5,0
Յերեքնուկ	2,7	0,2	0—1,5	—2,0
Սովույտը դարմանի հետ	1,0—2,0	0,2—1,0	1,2—2,2	0

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, շաքարով հարուստ բույսերի մեջ կաթնաթթու շատ ե կուտակվում, իսկ սովույտը ներկայացնելով հարուստ բույսերի մեջ յուղաթթուն ե շատ: Ընդհանուր թթվության կուտակման վրա խոշոր չափով ազդում ե նաև ջերմությունը: Յեթե խմորումը տեղի յեւ ունենում ցածր ջերմաստիճանում, թթվությունը քիչ ե, քիչ ե նաև շատ բարձր ջերմաստիճանի պայմաններում, որինակ՝ յեթե խմորումը տեղի յեւ ունենում

$5-10^{\circ}$ -ում, ընդհանուր թթուները կազմում են 1,94 %

$15-25^{\circ}$ -ում      »      »      »      2,19 %

$37^{\circ}$ -ում      »      »      »      1,45—1,82 %:

Ուսումնասիրությունները ցույց են տվել վոր թթվության առաջացման ժամանակ, սիլոսացվող մասսայի ներքին մասերում կաթնաթթու ավելի շատ ե առաջանում, քան արտաքին մասերում, իսկ յուղաթթուն և քացախաթթուն, ընդհակառակը, արտաքին մասերում ավելի շատ են, քան ներքին մասերում: Այդ

տարրերությունը նույնական միակերպ չեւ տարրեր բույսերից ստացված սիլոսի մեջ:

Սպիտակուցներով հարուստ և շաքարներից աղքատ բույսերի դեպքում կաթնաթթու քիչ և ստացվում, զրա շնորհիվ եւ սիլոսն անախորժ համ ու հոտ և ստանում. հման բույսերը յերբեք առանձին չեն սիլոսացնում, այլ ամեն անդամ նրանց հետ շաքարով հարուստ բույսեր են խառնում:

Սկզբնական շրջանում, այսինքն՝ առաջին յերեք որը սիլոսի մեջ թթվության առաջացումը շատ թույլ ե, իսկ հետագայում ուժեղանում ե և 100 գրամ չոր նյութի մեջ թթվությունը նույնիսկ համառ ե 8 %-ի: Այս թթվությունն առաջանում է վճ միայն շաքար չի պարունակում, նշանակում է՝ այդքան տոկոս թթվության կուտակման համար, բացի շաքարներից, նաև այլ նյութեր են ոգտագործվում: Սիլոսացման ժամանակ մասսայի մեջ թթվությունն առաջանում է, բացի շաքարների խմորումից, նաև ոսլայի և պենտոզաների (բարդ շաքարներ). Քայքայումից: Ոսլան և պենտոզաները սիլոսացվող բույսերի մեջ բավական շատ են. որանց և շաքարների ընդհանուր քանակը սիլոսացվող կերի մեջ յերբեմ հասնում է 25 %-ի: Վորպեսդի ոսլայից և պենտոզաներից թթվություն առաջանա, վորոշ տեսակի միկրոբներ նրանց վեր են ածում հասարակ շաքարների, իսկ վերջներս ել խմորվելով՝ տալիս են թթվուներ:

Հեշտ որգանական թթուների կուտակման ընթացքում, սիլոսի մեջ առաջ են գալիս նաև վորոշ քանակությամբ ցնդող թթվուներ և սպիրտ: Սրանք բավական շատ են առաջանում այն ժամանակ, յերբ կաթնաթթվային խմորումն անկանոն է ընթանում: Այդ նույնը տեղի յեւ ունենում նաև վորոշ տեսակի միկրոբների կողմից: Բացի այդ նոր նյութերից, սիլոսի մեջ առաջ են գալիս նաև վորոշ քանակությամբ թթվնջլաւաթա և այլ թթվուներ, վորոնք սիլոսի մեջ տալիս են համապատասխան աղեր.

այս վերջին թթվուները սիլոսի մեջ աղատ ձեռվ հանգես չեն դաշիս: Սիլոսացման ընթացքում կուտակված որգանական թթվուները վորոշ ժամանակից հետո պակասում են: Դրա հետեւանքը լինում է այն, վոր սիլոսացվող մասսայի մեջ այլ պրոցեսների, հատկապես սպիտակուցային նյութերի քայքայման ժամանակ, այդ թթվուների վորոշ մասը մի քանի նյութերի հետ միանալով՝ չեղոքանում ե, իսկ վորոշ մասն ել բորբոսանկերի կողմից ոգտագործվելով՝ քայքայվում է: Այդ յերկու պրոցեսներից առաջինը շատ հազվադեպ ե տեղի ունենում, իսկ յերկրորդը, ընդհակառակը, հաճախ և պատահում, զրա համար ել յերկրորդ պրոցեսը շատ վատնպավոր ե, վորովհետև բորբոսանկերի զարգացման հետեւանքով կուտակված թթվության գգալի առկուսը քայքայվում ե, վորից ել սիլոսացվող նյութերն ակառում են նեխվել:

Որգանական թթվուներից հիմնականը, վորը սիլոսացվող կերի համար խոշոր նշանակություն ունի, կաթնաթթուն ե. զրա համար ել պետք և աշխատել, վոր սիլոսացման ժամանակ ստեղծվեն այն բարոր պայմանները, վորոնք նպաստում են կաթնաթթվի կուտակմանը:

Կերի ազդային միացությունների փոփոխությունը.—Սիլոսացման ժամանակ կերի ածխաջրատներից, շաքարներից հետո, խիստ փոփոխության են յենթարկվում ազդային միացությունները: Այս միացություններից—պրոտեինային նյութերը բակտերիաների և ֆերմենտների ազդեցությունից քայքայվում են, վերածվում են պեպտոնների և ամինօթթուների, սրանք ել, իրենց հերթին, կարող են քայքայվել մինչեւ ամիակի: Բույսերի մեջ յեղած ազդային միացությունները, սիլոսացման ժամանակ, խմորումների ընթացքում փոփոխման յենթարկվելով՝ վորոշ կորուստ են տալիս: Կորուստը հատկապես մեծ ե, յերբ աննորմալ հասունացում ե տեղի ունենում, իսկ նորմալ հասունացման դեպքում կորուստը շատ փոքր ե. ազդայի կորուստը, միջին հաշվով, կազմում ե կերի ազդային միացությունների 5 % -ը: Ազդայի կորուստը հատկապես տեղի յեւ ունենում ամիակ առաջանալու ժամանակ: Ամիակը ցնդող գաղ ե, վորն առաջանում է բակտերիաների գործունեյության հետեւանքով և գուրս ե գալիս կերի միջից:

Սիլոսացման ժամանակ ազդային միացությունների ձեւ-

փոխության հիմնական դրական հատկանիշն այն է, վոր գժվարամարս պրոտեխնային նյութերը վեր են ածվում դյուրամարս ազոտային միացությունների Սիլոսացվող կերի մեջ ազոտային միացությունների ձևափոխման ժամանակ առաջացող բացասական կողմերից մեկն այն է, վոր վորոշ բակտերիաների գործունեյության հետեւանքով որգանական թթուների առկայությամբ հեշտ լուծվող ազոտային միացությունները վերականգնվում են, վորից ել առաջ եւ գալիս ցնդող ազոտ գազը: Կերի մեջ ազոտը պակասելու հիմնական պատճառներից մեկն այս է: Բայց յեթե սիլոսացման գործը հիշտ կազմակերպվի, ազոտի կորուստը շատ քիչ կլինի: Սիլոսացման պրոցեսում առաջ են գալիս նաև վորոշ քանակությամբ նիտրատներ: Նիտրատները գտնվում են նաև բույսերի բջջային հեղուկի մեջ: Խմորման ժամանակ այդ նյութերի վորոշ մասն ոգտագործում են միկրոբները, իսկ մնացած մասը լուծվելով կերի հեղուկի մեջ, հավաքվում է հորի հատակին: Վերոհիշյալ դիտողություններից կարող ենք յեղրակացնել, վոր կերերի սառը սիլոսացման ընթացքում բուսական մասսայից շատ քիչ քանակի որգանական նյութ եւ կորչում: Մի քանի հետազոտություններ ցույց են տալիս, վոր այդ կորուստը չոր մասսայի  $10^0$ -%ից ավելի չի լինում—դա մեծ չափով կախված է սիլոսացման գործի կազմակերպումից:

Բուսական ֆերմենտների և բակտերիաների դերը սիլոսի հասունացման պրոցեսում.—Կերաբույսերի սիլոսացման ժամանակ, սիլոսի հասունացման պրոցեսի ուսումնասիրության ընթացքում, հետազոտողներից վոմանք յերկար ժամանակ չեյին կարողանում վորոշել՝ արդյոք սիլոսի հասունացումը տեղի յեւ ունենում բուսական ֆերմենտների, թե՛ բակտերիաների գործունեյության հետևանքով: Այս հարցին վոչ չեր կարողանում պատասխանել: Բայց հետազայում ֆերմենտների և բակտերիաների գերի մանրամասն ուսումնասիրությունը ցույց տվեց, վոր առանց բակտերիաների ֆերմենտները կերի մեջ շատ չնշին թթվություն են առաջացնում: Բուսական շաքարները թթվի յեն վերածվում գլխավորապես բակտերիաների աճման ընթացքում, այդ պրոցեսներում ֆերմենտները միայն ոժանդակական ժամանակական ժամանակական գործունեյում են: Սիլոսի մեջ յեղած բակտերիաներից հիմնական նշանակություն ունեն թթվություն առաջացնողները, վորովհետև սրանք են հիմնական գեր խաղում սիլոսի հասունացման ժամանակ: Սիլոսի հասունացման ընթացքում նրա մեջ գոր-

մանակ ֆերմենտները կամ ենդիմները մեծ նշանակություն ունեն: Սուանց ֆերմենտների, միայն բակտերիաների գործունեյության ազդեցության տակ, բարդ պրոտեխնների քայլայման հետևանքով լուծված ազոտային միացությունների առաջացումը շատ թույլ է տեղի ունենում: Նշանակում ե՞ սպիտակուցների քայլայման պլրոցեսում գլխավոր գերմենատներին ե պատկանում: Թթու միջավայրում բուսական բջիջների մեջ պետազա և գրեպտազա ֆերմենտները բավական արագ են գործում: Այդ պատճառով ել հիշյալ ֆերմենտները կերերի սիլոսացման ժամանակ, թթվային պայմաններում կարող են լավ գործել: Ներկայումս արդեն կարելի յեւ ապացուցված համարել, վոր յեթե շաքարները թթվի վերածելու գործում գլխավոր գերմ խաղում են բակտերիաները, ապա սիլոսացվող կերաբույսերի ազոտային նյութերի բնույթի փոփոխման տեսակետից մեծ նշանակություն ունեն բուսական ֆերմենտները: Նշանակում ե՞ կերերի սիլոսացման պրոցեսում թե՛ բակտերիաները, թե՛ բուսական ֆերմենտները և թե՛ միկրոբների ֆերմենտները մեծ դեր են խաղում:

### ԿԵՐԵՐԻ ՍԻԼՈՍԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂ ՄԻԿՐՈԲՆԵՐԸ

Սառը սիլոսացման ժամանակ գործող միկրոբները.—Սիլոսի հասունացման առաջին որը կերի մեջ միկրոբները բավական շատ են և բազմազան: Նրանց քանակը կախված է սիլոսացվող բույսերի խոնավության տոկոսից, կլիմայական և այլ պայմաններից: Սկզբնական շրջանի միկրոբների այդ քանակն առանձնապես նշանակություն չունի, վորովհետև կարճ ժամանակից հետո, թթվության առաջացման նորմալ պայմաններում, այն խիստ փոփոխության և յենթարկվում, քանակի հետ փոխվում ե նաև նրանց տեսակային կազմը: Տարբեր տեսակի միկրոբների քանակը կերի թթվեցման ազդեցության տակ 1—2 որից հետո խիստ պակասում է: Սիլոսի մեջ յեղած բակտերիաներից հիմնական նշանակություն ունեն թթվություն առաջացնողները, վորովհետև սրանք են հիմնական գեր խաղում սիլոսի հասունացման ժամանակ: Սիլոսի հասունացման ընթացքում նրա մեջ գոր-

Ճող միկրոբների քանակը փոփոխության և յենթարկվում հետևյալ էկրպ.

Աղյուսակ № 2

Աղյուսակ կը ուղարկում	Շաքարանկեր- մի քանակը	Բակտերիաների քանակը 1 լի սմ <sup>3</sup>
0	5000	2,400
1	5000	1340,000
2	33,0	880,000
3	—	700,000
5	6,7	1640,000
11	2,1	1575,000
30	2,5	856,000
44	—	260,000
85	3,3	9,500
132	1,8	2,000

Ինչպես տեսնում ենք, առաջին որը բակտերիաների քանակը խիստ մեծանում է, իսկ հետո պակասում: Մինչեւ 10-րդ որը նորից և շատանում, զորից հետո նորից հետո պակասում է և 132-րդից հետո հասնում է մինիմումի: Հետաքրքրական և շաքարանկերի փոփոխությունը. նրանք թթվության պայմաններում խիստ պակասում են: Բայց չնայած դրան, միշտ ել նրանք սիլոսի մեջ վորոշ քանակությամբ կան: Հենց սրանց առկայությամբ ել պայմանակորդում են այն, վոր սիլոսի մեջ վորոշ քանակությամբ գինու սպիրու և առաջանում:

Թրու առաջացնող ի՞նչպիսի բակտերիաներ են գտնվում սիլոսի մեջ.— Թթու առաջացնող բակտերիաները սիլոսի հասունացման ընթացքում նույնպես փոփոխվում են: Սիլոսի հասունացման առաջին օրը հեղուկի մեջ գտնվում են զանազան գույշներ առաջացնող մեծ քանակությամբ բակտերիաներ, 24 ժամից հետո նրանք չքանում և փոխարինվում են նոր տիսակի բակտերիաներով:

Սիլոսի հասունացման առաջին շրջանում թթվային բակ-

տերիաներից ավելի շատ են աղիքային-գաղ առաջացնող խմբի բակտերիաները (կոլի-անրոգենես). Արանք քիչ ժամանակից հետո փոխարինվում են կաթնաթթվային «սորեպտոկոկեր» տեսակի բակտերիաներով: Վերջիններս սկզբնական շրջանում յերկանդիկների ձևով են հանդիս գալիս, իսկ հետո շղթայիկներ են կազմում: Վորոշ ժամանակից հետո, կաթնաթթվի կուտակման հետևանքով, զբանց փոխարինում են կաթնաթթվային ձողաձև բակտերիաները, վորոնք, սորեպտոկոկերի հետ համեմատած, կաթնաթթվին բավական զիմացկուն են և ավելի շատ կաթնաթթու յեն առաջացնում: Կաթնաթթվային ձողաձև բակտերիաներից հատկապես շատ և լակտոբացիլուս պենդոցեղիկուրուր, վորոշ, հասունացման 8—10-րդ շաբաթում, բոլոր կաթնաթթվային բակտերիաների 50% և կազմում: Ինչպիսի տեսնում ենք, սիլոսի մեջ կաթնաթթվային բակտերիաների տարրեր տեսակները միմյանց փոխարինում են:

Բացի վերոհիշյալներից, սիլոսի մեջ գտնվում են նուև այլ բակտերիաներ, ինչպես՝ յուղաթթվային բակտերիաները, մի քանի սապրոֆիլ միկրոբներ և այլն: Վերջիններին քանակը կախված է կաթնաթթվի քանակից, վորքան սա քիչ ե, այնքան ել այդ ուղեկցող յուղաթթվային բակտերիաները և սապրոֆիլ միկրոբները շատ են և ընդհակառակ ինչպիս սկզբներում նշեցինք, յուղաթթվային և այլ սապրոֆիլ բակտերիաների գերակշռությունը սիլոսի վորակի վրա խիստ ազդում է: Այդ տեսակետից ել կաթնաթթվային բակտերիաների նորմալ գործունեյությունը մեծ նշանակություն ունի հիշյալ վնասակար բակտերիաների կենսական պլրոցեները կասեցնելու համար: Սիլոսի վորակը գրիթի ամբողջապես կախված է կաթնաթթվային բակտերիաների նորմալ և ինտենսիվ գործունեյությունից:

Աղիքային-գաղ առաջացնող բակտերիաներ.— Սրանք բնության մեջ բավական շատ են տարածված, գտնվում են մարգականց և կենդանիների աղիքներում, հողի մեջ, բույսերի մակերեսին, ջրում, ողում և այլն: Այս բակտերիաները բաժանվում են յերկու խմբի՝ աղիքային բակտերիաներ (բակտերիում կոլի) և գաղ առաջացնող բակտերիաներ (բակտերիում ակրոգենես):

Բակտերիում կոլին հիմնականում ապրում և մարգկանց և կենդանիների աղիքներում, բայց միաժամանակ հյուրընկալվում

եռդի, ջրի, հողի մեջ և բույսերի վրա: Արանք շարժուն, փոքր, մոտ 2—3 միկրոն՝ մեծություն ունեցող անսպորավոր ձողիկներ են: Այս բակտերիաները լավ զարգանում են թթվածնային պայմաններում. դրանք սպիտակուցային նյութերը քայքայելով՝ առաջացնում են ծծմբաջրածին և ինդոլ, վորի հետևանքով նյութն անախորժ համ ու հոտ և ստանում: Այս բակտերիաները շաքարային նյութերը քայքայելով՝ առաջացնում են մի շարք նյութեր՝ կաթնաթթու, քացախաթթու, գինու սպիրտ, ածխաթթու և ջրածին: Բակտերիում աերոգեները հիմնականում հողի մեջ և ապրում, բայց նա հաճախ հյուրընկալվում և մարդկանց և կենդանիների աղիքներում, ողի, ջրի մեջ և բույսերի վրա: Այս խմբի բակտերիաներն անշարժ, 1—2 միկրոն մեծությամբ անսպոր փոքրիկ ձողեր են: Բակտերիում աերոգեները բակտերիում կոլիներից տարբերվում են րանով, վոր նա շաքարների քայքայումից մեծ քանակությամբ գազ և առաջացնում, սպիտակուցների ձևափոխումից ծծմբաջրածին չի առաջացնում, այլ դրա փոխարեն առաջացնում են ինդոլային քացախաթթու: Շաքարների քայքայումից նա շատ քիչ քանակությամբ կաթնաթթու յետ առաջացնում, բայց գրա փոխարեն առաջացնում և քացախային, սաթային և պրոպիօնային թթուներ, գինու սպիրտ և այլ նյութերը: Աերոգենեների գործունեյության հետևանքով առաջանում են զգալի քանակությամբ ածխաթթու, ջրածին գաղերը և քիչ քանակությամբ մեթան գազը:


Սղիքային-գազ առաջացնող բակտերիաները միշտ ել գտընվում են սիլոսացվող կերերի մեջ. նրանց տեսակները և քանակը, ըստ Հունդերի, կերարույսերի վրա շատ-շատ են: Այս խմբի բակտերիաները կաթնաթթվային բակտերիաներից տարբերվում են նրանով, վոր նրանք, ինչպես տեսանք, շաքարների խմորումից, բացի կաթնաթթվից, առաջացնում են նաև այլ տեսակի միջանկյալ նյութեր: Նրանց գործունեյության ժամանակ կաթնաթթուն հանդիսանում են վոչ թե հիմնական, այլ միջանկյալ պրոդուկտ:

Կաթնաքրվային բակտերիաներ.— Ինչպես վերևում նշեցինք,


<sup>1</sup> Միկրոնը յերկարության չափ է, վորը հավասար է մեկ մելիմետրի մեկ հազարերորդական մասին:

սիլոսի լավորակությունը վորոշվում է կաթնաթթվային խմորման պրոցեսի կանոնավորությամբ. վորքան կանոնավոր և ընթանում կաթնաթթվային խմորումը, վորքան ինտենսիվ և կուտակվում կաթնաթթուն, այնքան լավորակ և դուրս գալիս սիլոսը: Կաթնաթթվային խմորում առաջացնող կաթնաթթվային բակտերիաները բնության մեջ բավական շատ են և բազմատեսակ, նրանց ընդհանուրը բնորոշ կողմն այն ե, վոր նրանք անշարժ ձողաձև բակտերիաներ են: Արանք, շաքարները խմորելով, վորպես հիմնական պրոդուկտ, առաջացնում են կաթնաթթու: Սիլոսացման ժամանակ կաթնաթթվի հետ կուտակվում են նաև վորոշ քանակությամբ քացախային, սաթային և պրոպիօնային թթուներ, մասսամբ ել ածխաթթու և այլ պրոդուկտներ: Բայց նրանց մոտ, բացի կաթնաթթվից, մնացած նյութերը համարվում են խմորման յերկրորդական պրոդուկտներ, վորոնց առաջացնումը կախված է սիլոսի մեջ գործող կաթնաթթվային բակտերիաների առանձին տեսակների ֆիզիոլոգիական հատկություններից, կամ խմորման յենթակա շաքարի քիմիական կազմից:

Որինակ՝ յեթե կաթնաթթվային բակտերիաները խմորման են յենթարկում գլյուկոզ շաքարը, այն ժամանակ առաջ և գալիս միայն կաթնաթթու, այսպես:



իսկ յեթե խմորում են պենտոզ շաքարը, այն ժամանակ, բացի կաթնաթթվից, առաջ և գալիս նաև քացախաթթու:



Ինչպես հայտնի յե, սիլոսացվող բույսերի մեջ միշտ ել գտնվում են պենտոզ շաքարներ, գրա համար ել ամեն անգամ, նույնիսկ մաքուր կաթնաթթվային խմորման ժամանակ, կաթնաթթվի հետ քացախաթթու յե կուտակվում. հայտնի յե նաև, վոր կաթնաթթվային բակտերիաներից վոչ բոլորը կարող են պենտոզ խմորել: Բացի այդ, սիլոսի մեջ գործող տարբեր տեսակի կաթնաթթվային բակտերիաները բոլորը չեն, վոր հավասար քանակությամբ կաթնաթթու յեն առաջացնում: Պա արդեն կախված է այն զգայնությունից, վոր առանձին տեսակի

կաթնաթթվային բակտերիաներն ունեն կաթնաթթվի նկատմամբ:

Տարբեր տեսակի կաթնաթթվային բակտերիաներն իրարից տարբերվում են տարբեր տեսակի շաքարների նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Կաթնաթթվային բակտերիաները, ի տարբերություն աղիքային բակտերիաների, սննդանյութի մեջ շաքարների բացակայության գեպքում, շատ վատ են զարգանում: Խոկական կաթնաթթվային բակտերիաները, վորպես ազոտային սննդանյութ, կարողանում են ոգտագործել միայն պեպտոնները (լուծվող սպիտակուցային նյութեր), իսկ մնացած, այսպես կոչված վոչ խոկական կաթնաթթվային բակտերիաները, բացի այդ՝ կարող են ոգտագործել ավելի հասարակ ազոտային միացությունները:

Կաթնաթթվային բակտերիաների մոտ հայտաբերված են երիսպինին մոտիկ ֆերմենտ, վորը կարողանում է գործել գրեթե չեղոք ունեկցիա ունեցող միջավայրում, դրա համար ել զարմանալի չե, վոր շատ աղոտ պարունակող կերերում կաթնաթթվային բակտերիաներ չեն զարգանում:

Որլա-իենսենը, թթվող կերերի մեջ կաթնաթթվային բակտերիաների մասին յեղած ուսումնասիրությունները և իր հետազոտություններն ի մի բերելով՝ տալիս են կաթնաթթվային բակտերիաների հետեւյալ կարգը. այն կաթնաթթվային բակտերիաները, վորոնք շաքարների խմորման ժամանակ մեծ մասամբ կաթնաթթու և քիչ քանակությամբ կողմնակի նյութեր են առաջացնում, նաև բաժանում են հետեւյալ ցեղերին.

1. Տերմօբակտերիաների ցեղ—սրանք յերկար ձողիկներ են, զարգանում են  $50^{\circ}$ -ի և ավելի բարձր ջերմության պայմաններում, պենտոզա շաքարները չեն խմորում և  $22^{\circ}$ -ից ցածր ջերմության պայմաններում չեն գործում, շաքարասնկային խաշվածքի հեղուկի մեջ լավ զարգանում են: Այս ցեղի մեջ մանող կաթնաթթվային բակտերիաներից հայտնի է:

ա) Բակտերիում Դելբուգիկին, վորը լավ խմորում և սախարող շաքարները. կաթնաշաքարը չի խմորում, գտնվում է բազմաթիվ կերաբույսերի վրա. բավական շատ կաթնաթթու յե առաջացնում, թթվությանը բավական դիմացկուն ե:

բ) Բակտերիում բուլգարիկումը—սա չի խմորում սախարող

և մալտով շաքարները, այլ լավ խմորում են կաթնաշաքարը. բավական շատ թթվություն և առաջացնում, գտնվում են կաթնաթթերքների և սիլոսացվաղ բաղմաթիվ բույսերի վրա:

2. Ստրեպտոբակտերիաների ցեղ—լավ զարգանում են կաթի և շաքարանկային խաշվածքի հեղուկի մեջ: Լավ խմորում են մալտով շաքարը և սալիցինը (շաքարանման նյութե), բացառիկ գեպքում խմորում են կաթնաշաքարը: Այս ցեղի մեջ մանող կաթնաթթվային բակտերիաները մեծ մասամբ կարճ կամ յերկար ձողիկածի շղթաներ են տալիս, զարգանում են ցածր ջերմաստիճանում, նրանց մաքսիմալ ջերմությունը հավասար է  $35-40^{\circ}$ -ի: Այս ցեղից հայտնի յեն՝

ա) Ստրեպտոբակտերիում պլանդարում—խմորում և մալտովը, սախարողը, հաճախ նաև ուաֆինովը, պենտոզաները և այլ շաքարներ ու շաքարանման նյութեր:

բ) Ստրեպտոբակտերիում կազեյի—սա լավ խմորում են կաթնաշաքարը և յեղեգնաշաքարը. մալտովը գժվարությամբ և խմորում: Մեծ չափով գտնվում են կարտոֆիլային մղվածքներում:

3. Ստրեպտոկրիկուսների ցեղ—այս ցեղի մեջ մանող կաթնաթթվային բակտերիաները լավ զարգանում են կաթի մեջ. նշանակում են պիտի լավ խմորեն կաթնաշաքարը: Սրանցից հայտնի յեն՝

ա) Ստրեպտոկրիկուս սոլանակուարուս—վորը գտնվում է կարտոֆիլային թթված մղվածքի մեջ. լավ խմորում են կաթնաթթաքարը:

բ) Ստրեպտոկրիկուս ֆոնցիում—սա հաճախ հանդես է գալիս յերկու գնդիկներ միմյանց միացած յերկոկեկերի ձևով: Լավ խմորում են կաթնաշաքարը, մալտովը, տքստինը և այլն: Խմորում են նաև յեղեգնաշաքարը: Լավ զարգանում է  $35-45^{\circ}$ -ում.  $50^{\circ}$ -ից բարձր ջերմության չի դիմացկում. գտնվում է թթված կարտոֆիլի մեջ:

գ) Ստրեպտոկրիկուս լակտիսացիդի—սա յեղեգնաշաքարը և նման շաքարները չի խմորում, լավ խմորում են կաթնաշաքարը և մալտով շաքարները. զարգանում է  $25-35^{\circ}$  ջերմության պայմաններում.  $38-40^{\circ}$ -ից բարձր ջերմության պայմաններում գործել չի կարող—մեռնում ե. գտնվում է սիլոսացվող զանազան տեսակի կերերի վրա:

ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ, ՎՈՐՈՒՔ ԿԱԹՆԱԹԹՎԻ ՀԵՏ ԶԳԱԼԻ  
ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԳԱԶԵՐ ՅԵՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐ  
ԵՆ ԱՌԱՋԱՑՆՈՒՄ

1. Բեդաբակտերիումների ցեղ — սրանք վատ են գործում կաթի մեջ, իսկ շաքարանկային խաշվածքի հեղուկի մեջ բաշվական լավ են զարգանում, սրանք մաննիտը, ոսլան և այլ նման շաքարներ չեն խմորում: Թույլ են խմորում մաննողը և յերկապմունեցող շաքարները (կաթնաշաքար, յեղեգնաշաքար և այլն): Այս ցեղի մեջ մոնող կաթնաթթվային բակտերիաներից հայտնի յեն՝

ա) Բեդաբակտերիում բրեվե—խմորում և արաբինող շաշքարը, 38°-ից բարձր ջերմության պայմաններում չի գործում:

բ) Բեդաբակտերիում լանգում—չի խմորում արաբինողը. 45°-ից բարձր ջերմության դեպքում չի գործում. գտնվում է զանազան տեսակի թթվող կերերի մեջ:

2. Բեդակոկուսների ցեղ—սրանք յեղեգնաշաքարը ձևափոխելով՝ առաջացնում են լորձունք, լավ զարգանում են շաքարանկային խաշվածքի հեղուկի մեջ, ոսլան բոլորովին չեն խմորում. խմորում են յեղեգնաշաքարը և մալտողը. կաթնաշաքարը նույնպես յերեմն չեն խմորում, զարգանում են ցածր ջերմաստիճանում. սրանցից հայտնի յեն՝

ա) Բեդակոկուս Սրաբինոզացենս—խմորում և արաբինողը, հաճախ նաև քսիլոզը—տալիս ե յերկոկկերի կամ շղթաների ձևով բակտերիաներ, գտնվում է սիլոսացվող շատ տեսակի բույսի վրա:

բ) Բեդակոկուս բովես—սա յերեմն չի խմորում արաբինողը, գտնվում է թթվող կարտոֆիլի մեջ:

Ֆրեսը և Պետերսոնն իրենց աշխատակիցների հետ միասին ուսումնասիրելով սիլոսի հասունացման ընթացքը, մեծ նշանաւությունն իրենց աշխատակիցներին և կություն են տալիս լակտոբացիլուս պինտոացիտիկուսներին և սրանց մոտիկ բակտերիաներին, վորոնք խմորում են արաբինող և պենտողա շաքարները (լակտոբացիլուս արաբինողուս և լակտոբացիլուս պենտողուս): Հիշյալ բակտերիաները խմորելով՝ այդ շաքարներն առաջացնում են կաթնաթթու և քացախաթթու: Կատորացիլուս պենտողացիտիկուսը շաքարային նյութերի

վրա զարգանալով, առաջացնում է գաղեր՝ ջրածին և ածխաթթու, ինչպես նաև քացախացիկ կաթնաթթուներ: Յեթե այդ բակտերիայի հետ միասին սիլոսի մեջ զարգանում են կաթնաթթվային բակտերիաներից գեմոբակտերիում բուլգարիկումը և ստրեպտոկոկուսը լակտիսները, արդյունքը լինում է հակառակը, դրա համար ել սիլոսացման ժամանակ, յերբ մաքուր կուլտուրաներ են մուծում, պետք ե ընտրել այնպիսիները, վորոնք տալիս են միայն կաթնաթթու:

Յերբ սիլոսացվող կերի մեջ ջերմությունը բարձր ե, կաթնաթթվային բակտերիաներից զարգանում է բակտերիում Դելբուգիկին, իսկ ավելի ցածր ջերմության պայմաններում՝ ստրեպտոկոկուս լակտիս ացիդիները:

Կան տեղեկություններ նաև այն մասին, վոր սիլոսացման ժամանակ, բացի վերոհիշյալ կաթնաթթվային բակտերիաներից, գործում են նաև բակտերիում բրասիկումը և բակտերիում կրոկումներին ֆերմենտատինը (կաթնաթթվային բակտերիաներ):

Այս կաթնաթթվային բակտերիաներից սիլոսացման ժամանակ առանձնապես խոշոր նշանակություն ունեն ստրեպտոբակտերիաները, տերմոբակտերիաները և ստրեպտոկոկուսները: Շաքարների խմորման ժամանակ այս բակտերիաները մեծ մասամբ կաթնաթթու յեն առաջացնում, բայց սրանց հետ միասին զարգանում են նաև այլ բակտերիաներ, վորոնց խմորման ընթացքը փոխում են, դրա համար ել շատ կարելու և խկական կաթնաթթվային բակտերիաներն արհեստականորեն ավելացնել սիլոսի մեջ, վոր մեծ նշանակություն ունի սիլոսի վորակը բարձրացնելու համար: Յեթե խկական կաթնաթթվային բակտերիաների քանակը մեծ է սիլոսի մեջ, մնացած կողմնակի կամ թույլ կաթնաթթու առաջացնող բակտերիաների գործունեյությունը թույլ է լինում:


Քացախաթթվային բակտերիաներ—սրանք բնության մեջ բավական շատ են, գտնվում են ամենուրեք, զարգանում են հատկապես այնպիսի սննդանյութերի միջավայրում, վորտեղ կուտակվում է գինուր սպիրտ: Սրանք զարգանում են թթվածնի ազատ յեկամուտի պայմաններում: Սիլոսի նորմալ հասունացման ժամանակ քացախաթթվային բակտերիաները զարգանալ չեն կարող քանի վոր այդտեղ բացակայում և ազատ թթվածինը: Բայց սի-

լուսի մեջ, այնուամենայնիվ, վորոշ քանակությամբ քացախաթթվու յե կուտակվում: Այս յերևույթը վոչ թե կապված է անմիշապես քացախաթթվային բակտերիաների գործունեյության հետ, այլ քացախաթթվի կուտակումը տեղի յե ունենում մի շարք կաթնաթթվային բակտերիաների գործունեյության հետևանքով: Վերջիններս, շաքարները, առանձնապես պենտօգները խմորելիս կաթնաթթվի հետ միասին մասամբ առաջանում են նաև քացախաթթու:

Քացախաթթվային բակտերիաների գործունեյությունը սիլոսի մեջ, ինարկի, դրանով չի բացավում, նրանք սիլոսի մեջ հաճախ գործում են, յեթե սիլոսի հորում բավական շատ սպիրու և կուտակվում և ողն ել հեշտությամբ մուտք և գործում: Այս գեղքում նրանց քանակն այդտեղ բավական շատ և լինում, և սիլոսի մեջ ել մեծ քանակությամբ քացախաթթու յե կուտակվում:


Յուղաքրվային բակտերիաներ — սրանք գործելով սիլոսի մեջ, շաքարների ձևափոխումից յուղաթթու յեն առաջացնում: Յուղաթթվային բակտերիաները բնության մեջ շատ են, շատ են նաև նրանց տեսակները: Ընդունված ե այդ բակտերիաները դասել մի խմբի մեջ և այդ խումբն անվանել բացիլլուս ամիլոբակտերների խումբ: Սրանք բավական խոշոր ձողածե բակտերիաներ են, գորոնք առաջացնում են սպոր: Վորոշ տեսակների մոտ սպորն առաջ ե գալիս ձողի կենտրոնական մասում վորից ել ձողիկը դառնում և ուռուցքածե և նմանվում է իլիկի, վորոշ տեսակների մոտ ել սպորն առաջանում և ծայրի մասում, այս գեղքում բակտերիան թմբկազարկի ձողիկի ձեւ և ստանում (տես նկ. 4):

Բացիլլուս ամիլոբակտերիաներին կարելի յե հանդիպել գրեթե ամենուրեք. նրանց ապրելու հիմնական վայրը հողն ե, վորտեղից ել չնչին քանակությամբ հողի հետ, բույսերի միջոցով կարող են սիլոսի հորի մեջ անցնել: Սիլոսի հորում բուսական նյութերի ձևափոխման ժամանակ յուղաթթվային բակտերիաների միջոցով շաքարի ձևափոխումը մոտավորապես հետեւալ կերպ ե ընթանում:



Յուղաթթվային բակտերիաների գործունեյության ընթացքում սովորաբար ստացվում են նաև քացախաթթու:

Կան և մրջնաթթուներ, յերբեմն ել գինու, բուղբլյան և այլ տեսակի սպիրուներ: Այդ միջանկյալ նյութերի քանակը կախված է յուղաթթվային բակտերիաների առանձին տեսակներից, նրանց հասակից, սննդանյութերի կազմից և մի շարք այլ հանգամանքներից: Անհրաժեշտ է հիշատակել վոր յեթե յուղաթթվային բակտերիաները գործում են չեզոք միջավայրում, ապա սպիրուի հետ մեկտեղ առաջանում ե նաև դդալի քանակությամբ ացետոն:



Նկ. 4. Յուղաթթվային բակտերիաներ:

Բոլոր տեսակի յուղաթթվային բակտերիաները զարգանալով սիլոսի մեջ, առաջացնում են բավական մեծ քանակությամբ յուղաթթու, վորը, ինչպես տեսանք, սիլոսի վորակի վրա խիստ ապրում ե. դրա հետեւանքով սիլոսն անախորժ համ ու հոտ ե ստանում:

**Մի ՔԱՆԻ ԽՈՍՔ ՍԻԼՈՍԻ ՄԵՋ ԳՏԵՎՈՂ ՊԱԹՈՒԵՆ  
(ՀԻՎԱՆԴԱԲԵՐ) ՄԻԿՐՈՈՐԳԱՆԻՉՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Մի շարք յերկրներում, կենդանիներին սիլոսով կերակրելիս, թունավորման դեպքեր են արձանագրվել: Թունավորումը նույնպիսի բնույթ և ունեցելը ինչպիսին մարդկանց մոտ յերբեմն պատահում ե յերշիկի միսը գործածելիս: Մի քանի հետազոտողներ սիլոսի մեջ հայտնաբերել են յերշիկի թունավորում առաջացնող

բացիլուս բոդրութինուս բակտերիան։ Այս բակտերիան թունավոր է նրանով, վոր մսի մեջ զարգանալով՝ մսի սպիտակուցային նյութերը քայլայում և առաջացնում ե թունավոր նյութեր։ Բակտերիաներն իրենք թունավոր չեն, բայց նրանց առաջացրած նյութերն են, վոր ներծծվելով արյան մեջ, որգանիզմը թունավորում են, Բազմաթիվ փորձեր ցույց են տվել, վոր բացիլուս բոդրութինուսները կենդանիների հյուսվածքներում և աղիքներում չեն զարգանում, դրա համար ել որգանիզմի մեջ նրանց ներկայության վասակարությունը պետք ե համարել բացառիկ յերեւյթ, և սա ել այն գեղագում միայն, յերբ նրանք իրենց գործունեյության ընթացքում սպիտակուցային նյութերի քայլայումից թունավոր նյութեր են առաջացնում։

Բացիլուս բոդրութինուսները լավ զարգանում են թույլ հիմքային պայմաններում, իսկ, ընդհակառակը, թթվային միջավայրում նրանք զարգանալ չեն կարող, նշանակում են սիլոսի նորմալ հասունացման պայմաններում նրանք յերբեք չեն կարող գործել։ Կենդանիների վրա ավելի վասակար են ներգործում բորբոսած սիլոսը։ Հայտնի յեն մի քանի բորբոսասնկեր, վորոնք սիլոսի հետ կենդանիների որգանիզմի մեջ անցնելով՝ լուրջ վասաներ են հասցնում, յերբեմն նույնիսկ մահ են պատճառում, որինակ՝ առապերգելուս ֆլավուսը և ասպերգելուս ֆումիգադուսը սիլոսի հետ անցնելով կենդանու որգանիզմը, կարող են խիստ վասակել։ Ամերիկայում կատարված գործերը ցույց են տվել, վոր գոնսիկի բորբոսած սիլոսով հորթերին կերակրելիս՝ 40 որից հետո նրանք մահանում են։ Դա հաճախ արտահայտվում է այն ժամանակի, յերբ դոնսիկը տաք սիլոսացման և յենթարկվում։ Դրա համար ամեն կերպ պետք ե խուսափել տաք սիլոսացումից և զարկ տալ սառը սիլոսացման յեղանակին. պետք ե հետեւ, վոր հասունացման պլոցեսն անպայման նորմալ ընթանա։

**ԿԱԹՆԱԹԹՎԱՅԻՆ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՄԱՔՈՒՐ ԿՈՒՏԾՈՒՐԱՆԵՐԻ  
ՑԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԻՐԱԾՈՒՄԸ ՍԻԼՈՍԱՅՄԱՆ  
ՊՐՈՑԵՍՈՒՄ**

Կերերի սիլոսացման ժամանակ սիլոսի վորակը, նրա համն ու հոտը կախված են կաթնաթթվային բակտերիաների նորմալ և ինտենսիվ գործունեյությունից. այդ նկատի ունենալով, գիտ-

նականների մեջ միտք ե հղացել, թե արդյոք հնարավոր չե կերերի սիլոսացման ժամանակ կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաներ ոգտագործել, կուլտուրաներ, վորոնք ստացվում են բակտերիոգիական լաբորատորիաներում։ Այդ ուղղությամբ կատարված փորձերը ցույց են տվել, վոր կերերի սիլոսացման ժամանակ հասունացման պլոցեսներն այս կամ այն չափով կախված են պատահականություններից։ Այդ պլոցեսներում գերակշռությունը պատկանում է հատկապես այն միկրոբներին, վորոնք սիլոսացման տվյալ պայմաններում շատ են և նրանց դարգացման համար ոպտիմալ պայմաններ են ստեղծված։ Ճիշտ ե, կաթնաթթվային բակտերիաները սիլոսացվող բոլոր տեսակի կերերի վրա գրեթե միշտ ել գտնվում են, բայց նրանց քանակը խիստ տարբեր ե զանազան ժամանակներում քաղված տարբեր տեսակի բույսերի մոտ։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, վոր խոնավ ամիսներում քաղված բույսերի վրա եղիփփտային միկրոբները շատ-շատ են, սրանց հետ շատ են նաև կաթնաթթվային բակտերիաները։ Խոկ չոր ամիսներում քաղված բույսերի վրա, ընդհակառակը, այդ միկրոբների քանակը շատ քիչ է։ Չոր յեղանակին քաղված բույսերի վրա շատ են սպորավոր տեսակի միկրոբները, վորոնք ողից փոշու հետ ընկնում են կերերի վրա։

Ցեվե կերաբույսերի վրա կաթնաթթվային բակտերիաները քիչ են, սիլոսացման ժամանակ նրանք շատ զանդաղ են գործում։ մինչև վոր նրանք սկսում են նորմալ զարգանակ, կողմնակի վասակար միկրոբներն արդեն զարգացած են լինում։ Այս դեպքում արդեն սիլոսը վատ վորակի յե ստացվում։

Հաճախ են պատահում այնպիսի դեպքեր ել, յերբ սիլոսացվող կերերի վրա կաթնաթթվային բակտերիաները գրեթե բացակայում են։ Այդ պատահում ե հատկապես գյուղատնեսական արտադրության ժամանակ ստացված բուսական մնացորդներն ոգտագործելիս, ինչպես՝ որինակ՝ ճակնդեղի տերեներն ու արմատների մնացորդները, կարտոֆիլի մզվածքից, հետո ստացված մնացորդը և այն, վորոնց վրա գտնված կաթնաթթվային բակտերիաները վերամշակման շնորհիվ քչանում են կամ նրանց գործունեյությունը խիստ թուլանում ե։ Կաթնաթթվային բակտերիաներն առանձնապես քիչ են կամ բոլորովին բացակայում են

սպիտակուցային նյութերով հարուստ կերերի վրա։ Փորձերը ցույց են տվել, վոր կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաների ոգտագործումը հիշյալ կերերի սիլոսացման ժամանակ խոշոր նշանակություն ունի։

Մի շաբթ հետազոտություններից պարզված ե, վոր շաքարով հարուստ բույսերը, յերբ սիլոսացվում են տաք յեղանակին և բույսերի վրա կան բավական մեծ քանակությամբ կաթնաթթվային բակտերիաներ, կաթնաթթվային խմորումը շատ նորմալ և ընթանում ե այս դեպքում կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաների ոգտագործումն զգալի արդյունքներ չե տալիս։

Կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաների ոգտագործումն առանձնապես եֆեկտավոր և սպիտակուցային նյութերով հարուստ բույսերի և զյուղատնտեսական արդյունաբերությունից ստացված մնացորդների սիլոսացման ժամանակ։

Բակտերիաների մաքուր կուլտուրաների կիրառման դեպքում, համեմատած բնական ճանապարհով կատարվող հասունացման պրոցեսի հետ, սիլոսի մեջ զաղեր և ամոնիումի աղեր շատ քիչ են առաջ գալիս։ Բացի այդ, կերն ստացվում ե բաց գույնի, համելի համ ու հոտով, պահպանման ժամանակ շուտ չի փչանում, շուտ հասունանում ե, և վոր կարեորն ե, կորուսի տոկոսը շատ քիչ և լինում։

Մաքուր կուլտուրաների ոգտագործումը լավ արդյունքներ կտա սառը յեղանակներին սիլոսացման ժամանակ — հատկապես աշնան յեղանակներին, յերբ ողի ջերմությունը շատ ցածր է։ Պարզ ե, վոր այս դեպքում պետք ե ոգտագործել այնպիսի կաթնաթթվային բակտերիաներ, վորոնք լավ զարգանում են ցածր ջերմաստիճանում։

Ներկայում յելքոպական մի շաբթ յերկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա և այլն) կերերի սիլոսացման համար կաթնաթթվային բակտերիաներից պատրաստում են մաքուր կուլտուրաներ։ Այդ նպատակի համար մի շաբթ անտեսություններ սիլոսացման ժամանակ ոգտագործում են թթվածկածկ կարի լուծույքը, վորը մեծ քանակությամբ կաթնաթթվային բակտերիաներ և պարունակում։ Սակայն պետք ե նկատի ունենալ, վոր թթվածկ կաթի կաթնաթթվային բակտերիաները խմորում են միայն կաթ-

նաշաքարը, նրանք յերբեք բույսերի մեջ դտնված յեղեգնաշաքարը և այլ շաքարներ չեն կարող խմորել ու կաթնաթթու առաջացնել։ Այսինչ սիլոսացվող կերերի մեջ զլավավորապես յեղեգնաշաքար ե դտնվում, և այդ պատճառով ել թթվածկ կաթի մեջ յեղած կաթնաթթվային բակտերիաները կերերի սիլոսացման ժամանակ ոգտագործելը չի կարող նշանակություն ունենալ։ Դրա համար ել սիլոսացման ժամանակ պետք ե ոգտագործել այնպիսի կաթնաթթվային բակտերիաներ, վորոնք յեղեգնաշաքարը և այլ բուսական շաքարներ կարող են խմորել և առաջացնել կաթնաթթու։ Բացի այդ՝ կերերի սիլոսացման համար պետք ե ոգտագործել այնպիսի կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրան, վորը շաքարների խմորման ժամանակ առաջացնի միայն կաթնաթթու, կամ սրա հետ շատ քիչ գաղեր տա, և ընդունակ լինի նաև տարբեր ջերմաստիճանի պայմաններում մի քանի շաքարներ խմորել։ Այստեղից ել պարզ ե, վոր տաք սիլոսացման ժամանակ պետք ե ոգտագործել այնպիսի կաթնաթթվային բակտերիաներ, վորոնք զիմացկուն են բարձր ջերմությանը, և սառը սիլոսացման ժամանակ ոգտագործել այնպիսիները, վորոնք ցածր ջերմության պայմաններում լավ են զարգանում։

Որինակ՝ մի շաբթ հետազոտողներ հանձնաբարում են բարձր ջերմության պայմաններում կերերը սիլոսացնելու ժամանակ ոգտագործել կաթնաթթվային բակտերիաներից բակտերիում Դելբուգկին,  $25-30^{\circ}$ -ի պայմաններում ոգտագործել բակտերիում կուկումերի գերմենտատին, իսկ  $18-22^{\circ}$ -ի պայմաններում՝ բակտերիում լաքտիս ացիդին։

Պարզ ե, վոր այդ յերեք խմբերից պատրաստած մաքուր կուլտուրան կարելի յե ոգտագործել և բարձր, և ցածր ջերմության պայմաններում հասունացող սիլոսների համար։

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել, վոր կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաներ ստանալու համար նախորոք նրանց այս կամ այն միջավայրից մեկուսացնում են և լարուառիայում բազմացնում։ Բազմացման համար կարելի յե ոգտագործել զանազան տեսակի սննդապանյութեր, միայն թե սննդապանյութը բավական քանակությամբ աղոտային և շաքարային նյութեր պետք ե պարունակի։ Որինակ՝ կարելի յե հանքային նյութերից պատրաստել սննդապանյութ, ավելացնելով  $0,5^{\circ}$  պետող

և 1% շաքար: Մննդանյութ կարելի յե պատրաստել նաև տարեկանի թփուկներից, խառնելով որանց հետ կարտոֆիլի խաշվածքի 20%-ային հեղուկ (մինչև հագենալը) և ճակնդեղի տերեներ կամ նրա մանրուքները՝ 10/0-ի հաշվով: Տարբեր տեսակի կաթնաթթվային բակտերիաներ այս կամ այն մննդանյութի վրա տարբեր ինտենսիվությամբ են զարգանում: որինակ՝ բակտերիում Դելրուգկին լավ զարգանում ե սպիտակուցային նյութերով հարուստ մննդանյութերի վրա, այսինչ մնացած կաթնաթթվային բակտերիաները նման պայմաններում չեն զարգանում, բայց շատ լավ զարգանում են բուսական խաշվածքներում (այսինքն նրանցից պատրաստած հեղուկ լուծույթներում): Բոլոր տեսակի կաթնաթթվային բակտերիաներն ընդհանրապես լավ զարգանում են ճակնդեղի մանրուքներից պատրաստված խաշվածքի մեջ: Դրա համար վերցնում են 500 գրամ ճակնդեղի մանրուք և վրան ավելացնում մեկ լիտր ջուր:

Կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաներ ստանալուց հետո գրանք կարելի յե լցնել սիլոսացվող կերերի վրա (հորի մեջ): Կաթնաթթվային բակտերիաների կուլտուրաներ գործածելիս գրանք նույնպես պետք ե լցնել վորոշ չափով: Գիտնականներից վոմանք առաջարկում են 1 կգ սիլոսացվող կերին ավելացնել 10—15 լս. սմ բակտերիաների հեղուկ: Այս հարերությունը, ինչ խոսք, շատ սիլոսների գեղքում կպակասի: Այս դեպքում, ըստ մի շարք հեղինակների, մեկ տոնն սիլոսին բավական ե ավելացնել 7—10 լիտր կաթնաթթվային բակտերիաների կուլտուրա: Ինչպիս տեսնում ենք, կերերի սիլոսացման ժամանակ կաթնաթթվային բակտերիաների կուլտուրան բավական շատ ե և այդ քանակությունը հնարավոր չե ստանալ կենարոնական լաբորատորիայից: Դրա համար ել ամեն մի տնտեսություն ինքը պետք ե պատրաստի այդ կուլտուրան, իսկ կենարոնական լաբորատորիայից պետք ե ստանա կաթնաթթվային բակտերիաների հիմնական կուլտուրաները և կուլտուրայի պատրաստման վերաբերյալ գրավոր հրահանգները: Բացի կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաների ոգտագործումից, սիլոսացման ժամանակ նաև ոգտագործում են կերակրի աղը, վորը սիլոսացվող կերի 0,1—0,5% պետք ե կազմի: Կերակրի աղի այդ քանակը յերբեք ել չի ազդում միկրոբանիզմների գործունեյության վրա,

ընդհակառակը, այդ աղը նպաստելով միկրոբներին, միաժամանակ բարձրացնում ե սիլոսի վորակը: Կերակրի աղի ավելացման հետեւ վանքով բուսական բջիջներից բուսական նյութն արագորեն արտահոսում ե, դրա համար ել բակտերիաներն ինտենսիվ են գործում, կաթնաթթվի կուտակումն արագ ե տեղի ունենում: Բացի այդ կերակրի աղը սիլոսին տալիս ե հաճելի համ, վորի շնորհիվ կենդանիներն այդ սիլոսը մեծ ախտօժակով են ուտում:

Ինչպիս տեսնում ենք, վորակավոր սիլոսի ստացումը կախված ե կաթնաթթվային բակտերիաների նորմալ գործունեյությունից: Դրա համար ել մեր խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում աշխատողները պետք ե լավ ծանոթանան կաթնաթթվային բակտերիաների զարգացման անհրաժեշտ գործոններին. բացի գրանից, նրանք նաև լավ պիտի գիտենան այն միկրոբները, վորոնք սիլոսացման ժամանակ վատ հետևանքներ են տալիս:

Գիտենալով այդ բոլորը, հնարավոր ե սիլոսի հասունացման ընթացքը փոխել ցանկացած ուղղությամբ:



ՑԱՆԿ

	Եջ
Ինստիտուտի կողմից . . . . .	5
<i>Om inestimyuma . . . . .</i>	6
Միկրոբների դերը կերերի սիլոսացման գործում . . . . .	7
Կերաբույսերի սիլոսացման եյությունը . . . . .	7
Կերերի սիլոսացման համառոտ պատմությունը . . . . .	9
Ի՞նչ են միկրոբները . . . . .	12
Սիլոսացվող կերերի մեջ առաջացող խմբումների տեսակները . . . . .	15
Ինչի՞ց ե կախված սիլոսի վորակը . . . . .	18
Ողի նշանակությունը սիլոսացման պրոցեսում . . . . .	18
Կաթնաթթվային խմորում . . . . .	19
Սիլոսացվող նյութերի մեջ կաթնաթթվի կուտակման անհրաժեշտ պայմանները . . . . .	26
Տարրեր ձևերով պատրաստված սիլոսը և նրանց արժեքավորումն ըստ միկրոբների գործունեյության . . . . .	30
Սիլոսային կառուցումներին առաջադրվող պահանջները . . . . .	32
Սառը յեղանակով սիլոս պատրաստելու ժամանակ կերի մեջ առաջացող ֆիզիկո-քիմիական փոփոխությունները . . . . .	39
Կերերի սիլոսացման ժամանակ գործող միկրոբները . . . . .	45
Բակտերիաներ, վորոնք կաթնաթթվի հետ զգալի քանակությամբ գաղեր և միջանկյալ պրոդուկտներ են առաջացնում . . . . .	52
Մի քանի խոսք սիլոսի մեջ գոնվող պաթոգեն (հիվանդաբեր) միկրոօրգանիզմների մասին . . . . .	55
Կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաների և քիմիական նյութերի կիրառումը սիլոսացման պրոցեսում . . . . .	56

Պատ. խմբագիր՝ Ա. Կարսով ետքան  
Տեխ. խմբագիր՝ Վ. Մանուկյան  
Լեզվ. խմբագիր՝ Ռ. Տռնյան  
Արբագրիչ՝ Տրեբունն  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ա. Շահըրազյան

Հանձնված և արտադրության 6/VIII 1940 թ.

Ստորագրված և տպագրելու 16/VIII 1940 թ.

Վֆ455. հրատ. № 70, պատվեր № 189, տիրաժ 1000

Առ. փորմատ 60×84<sup>1/16</sup>, 4 տպ. մամուլ, 1 մամուլում 36.480 տպ. նիշ

ԱրմՖԱՆ-ի հրատարակության տպարան, Երևան, Խենինի փ. 67.

ՀՀ Ազգային գրադարան



NL0280195

15392

ԳԻՒԾ 1 Ռ. 50 4.